

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.06.2019
Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 21 անդամներից 18-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:
2. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում:
3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ամբիոնի վարիչների հաշվետվությունը:
4. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանի հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի դեկանի տեղակալ Վ. Աղաբաբյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետի հինգ մասնագիտություններ իրականացրել են ավարտական աշխատանքների պաշտպանություններ:

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություն է իրականացրել «Պատմություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Առկա ուսուցմամբ ավարտական աշխատանք է պաշտպանել 17 ուսանող: Ուսանողներից 4-ը ստացել է «գերազանց», 10-ը՝ «լավ», 3-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել: Հեռակա ուսուցման բաժնում 45 ուսանող պաշտպանել է ավարտական աշխատանք: 2 ուսանող ստացել է «գերազանց», 11-ը՝ «լավ», 32-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Ձեկուցողն ավելացրեց, որ քննական հաձնաժողովի նախագահ, պ.գ.թ., պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը հիմնականում գոհ է մնացել ավարտական աշխատանքների գիտական մակարդակից, ուսանողների պատրաստվածությունից ու ցուցաբերած գիտելիքներից: Իր հաշվետվության մեջ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն ուշադրություն է դարձրել այն փաստին, որ ավարտական աշխատանքների վերաբերյալ գրված կարծիքներն ու գրախոսությունները գրված են ըստ էության, վեր են հանում վրիպակներն ու թերությունները: Նա առավելապես կարևորել է պաշտպանության ընթացքում դիդակտիկ նյութերի և հատկապես քարտեզների կարևորությունը, որոնց առկայության դեպքում ուսանողների պատասխաններն առավել հիմնավոր և փաստարկված կլինեն:

Ձեկուցողը ներկայացրեց, որ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից ուսումնական տարեսկզբին արդեն վերջնական հաստատվել էին ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, նշանակվել էին ղեկավարներ: Սահմանվել էր գրաֆիկ՝ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Ձեկուցողը նշեց, որ քննական հաձնաժողովի նախագահ Բ.գ.դ. Վարդան Դևրիկյանը իր գոհունակությունն է հայտնել քննական գործընթացի արդյունքների վերաբերյալ՝ մասնավորապես ընդգծելով այն հանգամանքը, որ շրջանավարտների գիտելիքները խորն էին, որակական մակարդակը՝ բարձր: Լավ տպավորություն է թողել ուսանողների բանավոր խոսքը, որ սահուն էր և արտահայտիչ: Իհարկե, ավարտական որոշ աշխատանքներում նկատելի էին գրքայնություն, ինքնուրույնության պակաս և այլ մասնավոր թերություններ: Հանձնաժողովի նախագահը խորհուրդ է տվել հետագայում խուսափել ծավալուն և տարողունակ թեմաներից և ավելի մեծ ուշադրություն դարձնել արդիական թեմաներին: Հանձնաժողովն առաջարկել է, որ ավարտական աշխատանքները կրեն առավելապես գիտագործնական ուղղվածություն, և այդ համատեքստում ցանկալի կլիներ, որ հատկապես հայոց լեզվից գրվող ավարտականներում ուսումնասիրվեր ժամանակակից մամուլի, հեռուստատեսության լեզուն, առանձնակի ուշադրություն դարձվեր ուղղախոսությանը:

Զեկուցողը նաև ներկայացրեց հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 20 շրջանավարտներից 5-ը ստացել է «գերազանց», 10-ը՝ «լավ», 5-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

«Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի կողմից մինչև ուսումնական տարվա սկիզբը կազմվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Սահմանվել է գրաֆիկ՝ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ. իրականացվել է ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, որն ընդգծել է նաև քննական հանձնաժողովի նախագահ, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Հարությունյանը, ով իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքները գրվել են անգլերենով, մեծ մասամբ ներկայացվել են լեզվաբանական արդի խնդիրներ, և փորձ է արվել նորովի և տարբեր տեսանկյուններից ներկայացնել դրանք:

Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած առկա ուսուցման համակարգի 26 ուսանողից 12-ը ստացել է «գերազանց» գնահատական, 13-ը՝ «լավ», 1-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպված ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: «Հոգեբանություն» մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած առկա ուսուցման համակարգի 11 շրջանավարտներից 6-ը ստացել է «գերազանց», 5-ը՝ «լավ» գնահատական: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Զեկուցողը նաև ներկայացրեց «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 35 շրջանավարտներից 3-ը ստացել է «գերազանց», 14-ը ստացել է «լավ», 18-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Զեկուցողը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո քննական հանձնաժողովի նախագահ, հ.գ.դ., պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը ներկայացրել է իր առաջարկությունները՝ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ, և հայտնել իր գոհունակությունը տարվող աշխատանքներից: Նա առաջարկել է հետագայում ավելի մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքի հետազոտության մեթոդների ընտրությանը և դրանց համապատասխանությանը հետազոտվող առարկային:

Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ, իրականացվել է ավարտական աշխատանքի նախապաշտպանություն:

Զեկուցողը նաև նշեց, որ ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, որը փաստեց նաև քննական հանձնաժողովի նախագահ, բ.գ.թ., դոցենտ Մելանյա Ղազարյանը, ով իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Նա նշեց, որ ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքներով 3 ուսանող ստացել է «գերազանց», 2-ը՝ «լավ»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

Ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը արձանագրեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունը բոլոր մասնագիտություններից ունեցել է պատշաճ ակադեմիական մակարդակ և բավարար կազմակերպվածություն:

Ուսանողները ավարտական աշխատանքների պաշտպանությանը ներկայացել են պատրաստ: Մեծամասնությունը անհրաժեշտ չափով ուսումնասիրել էր պահանջվող գրականությունը և օժանդակ նյութերը: Կային նաև թերի պատրաստված ուսանողներ: Վերջիններս հիմնականում ուսումնառության ընթացքում ունեցել են ակադեմիական ցածր առաջադիմություն: Դեկանը շեշտեց, որ առաջընթացը պայմանավորված է մի շարք կարևոր աշխատանքներով, որոնք տարիների ընթացքում կանոնավորապես իրականացվում են ամբիոններում: Առաջին հերթին դրական դեր են ունեցել նախորդ ամիսներին կազմակերպված նախապաշտպանությունները: Ամբիոնների վարիչները գործող ժամանակացույցով իրականացրել են նախապաշտպանություններ /որոշ ամբիոններում՝ մի քանի անգամ/, որոնց ընթացքում շտկվել են նկատված սխալներն ու թերությունները: Որակի բարձրացմանն անշուշտ նպաստել են նաև ավարտական և կուրսային աշխատանքներ կատարելու վերաբերյալ մեթոդական ձեռնարկների առկայությունը ամբիոններում, ինչպես նաև գնահատման հստակ չափանիշերով առաջնորդվելը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ զարնանային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է դեկանատի մշտական ուշադրության կենտրոնում: Ընդգծվեց, որ տարեցտարի բարձրանում է ուսանողների պատրաստվածության մակարդակը ստուգարքներին և քննություններին: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 82.78%: Անցած ուսումնական տարվա համեմատ այն նվազել է մոտ 8%: Դա

բացատրվում է նրանով, որ ավելի մեծ ուշադրություն է սկսել դարձվել ընթացիկ ստուգումների և քննությունների ընթացքում ակադեմիական ազնվությանը: 2018-2019 ուստարվա ամառային քննաշրջանին մասնակցել է 273 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 38 ուսանող, գերազանց և լավ՝ 74, խառը գնահատականներ՝ 101, իսկ միայն բավարար՝ 13 ուսանող: 47 ուսանողներ չեն կարողացել հանձնել քննությունները և իրենց ուժերը կփորձեն լուծարքային շրջանում: Ձեկուցողը նշեց, որ մեկ անբավարար է ստացել 30 ուսանող, երկու անբավարար՝ 11, իսկ երեք և ավելի՝ 6 ուսանող: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասն անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Ձեկուցողը ընդհանուր գծերով ներկայացրեց ակադեմիական պարտքերի պատկերը, որը, ըստ մասնագիտությունների, հետևյալն է.

- Պատմություն՝ 6
- Օտար լեզու և գրակ.՝ 5
- Տարրական մանկ. և մեթոդիկա՝ 36

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները (Հաշվետվությունները կցվում են՝ **Հավելված 1, Հավելված 2, Հավելված 3, Հավելված 4, Հավելված 5**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ամբիոններում իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց 2018-2019 ուստարվա ընթացքում Հումանիտար գիտությունների ֆակուլտետում իրականացված աշխատանքները (Հաշվետվությունը կցվում է՝ **Հավելված 6**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակում դեկանի իրականացրած աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգում ընդգրկված էր նաև ընթացիկ երկու հարց՝
ա) Ֆակուլտետի ուսումնական պլանի հաստատում,
բ) Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2018-2019թթ. անհատական ծանրաբեռնվածությունների քննարկման հարցը,

Ընթացիկ առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը հայտնեց, որ Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմվել և ներկայացվել են 2019-20 ուստարվա ուսումնական պլանները՝ ըստ

կրթական ծրագրերի: Ըստ կիսամյակների ճշտվել են առարկաները՝ համապատասխան ժամաքանակներով:

Ընթացիկ երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Չեկուցողը հայտնեց, որ ֆակուլտետի հինգ ամբիոններում գրեթե ավարտվել է դասախոսների՝ 2019-2020թթ. ուսումնական տարվա անհատական բեռնվածությունների կազմումը: Մինչ առարկաների բաշխումը բոլոր ամբիոններում տեղի են ունեցել քննարկումներ: Անհատական բեռնվածության հիմքում դրվել է գիտական աշխատանքների ուղղվածությունը և գիտական նախասիրությունը: Խնդիր դրվեց մինչև ուսումնական տարվա սկիզբ ունենալ դասավանդելիք առարկայի ամբողջական փաթեթը՝ պորտֆոլիոն: Շեշտվեց նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է դասավանդման նոր մեթոդների ներմուծումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման գործընթացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

Ելույթ ունեցողները հայտնեցին, որ ուսումնական պլանները և անհատական բեռնվածությունը կազմվել է մանրամասն ու հանգամանալից քննարկումներից հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) 2019-2020 ուստարվա ուսումնական պլանները ընդունել ի գիտություն:

բ) Մասնագիտական ամբիոնների 2019-2020թթ. անհատական ծանրաբեռնվածության հարցը ընդունել ի գիտություն: Ըստ այդմ՝ դասախոսներին հանձնարարել նոր ուսումնական տարվա համար կազմել անհատական զարգացման և աշխատանքային պլանները, մինչև օգոստոսի վերջը նախապատրաստել և ամբիոն ներկայացնել դասընթացների փաթեթները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. Աղաբաբյան

2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր մասնագիտություններին՝ մի շարք դասընթացներով «Հայոց պատմության հիմնահարցեր», «Փիլիսոփայության հիմունքներ», «Իրավագիտություն», «Տրամաբանություն», «Քաղաքագիտություն», «Ազգագրություն», «Հայ ազգագրություն», «Կրոնների պատմություն»:

Ամբիոնի դասախոսական կազմում ընդգրկված քսանչորս դասախոսներից մեկը պատմական գիտությունների դոկտոր է, ութը՝ պատմական գիտությունների թեկնածու, յոթը՝ նաև դոցենտ, մեկը՝ քաղաքական գիտությունների թեկնածու, երկուսը՝ ասիստենտ, տասներկուսը՝ դասախոս:

2018թ. սեպտեմբերի ամսին ամբիոնի կողմից՝ համաձայն ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի, կազմվել և հաստատվել է ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը:

Հաշվետու 2018-2019 ուստարում ամբիոնում կատարվել են ինչպես ուսումնագիտական այնպես էլ ուսումնակազմակերպչական աշխատանքներ:

Կազմվել է ամբիոնային ծանրաբեռնվածությունը, կատարվել են դասաժամերի բաշխում, հաստատվել են դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունները: Ճշգրտվել են համատեղությամբ աշխատող դասախոսների աշխատանքային գրաֆիկները:

Կազմակերպվել և իրականացվել են 2017-18 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ակադեմիական պարտքերի մարումը:

Տարեսկզբին վերանայվել և սահմանված կարգով հաստատվել են «Պատմություն» մասնագիտության եզրափակիչ, առանց եզրափակիչ, առանց ընթացիկ գնահատմամբ և հանրագումարային քննությունների հարցաշարերը և ժամանակին տրամադրվել ուսանողներին: Կազմվել և վերանայվել են առարկայական բոլոր ծրագրերը, պորտֆոլիոները՝ որակի ապահովման չափանիշներին

ու ուսումնական պլաններին համապատասխան: Առաջին կուրսեցիների համար պատրաստվել է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և տեղադրվել Մասնաճյուղի կայք-էջում:

Սահմանված կարգով հավաքագրվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, քննարկվել, հաստատվել են ու տրամադրվել ուսանողներին: Մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են «Պատմություն» մասնագիտության ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ուսանողների ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանությունը:

Հաշվետու ուսումնական տարում ամբիոնում նախատեսված են եղել առկա և հեռակա ուսուցմամբ 3-ական պրակտիկաներ՝ արտադրա-մանկավարժականը (Տավուշի մարզի դպրոցներ, ղեկ.՝ Ա. Մատինյան, հեռակա ուսուցում՝ Ն. Մարգարյան), արտադրականը (ՀՀ հուշարձ. և թանգարաններ, Իջևանի պատմաերկրագիտական թանգարան, Դիլիջանի ժողովրդական արվեստի թանգարան, Դիլիջանի երկրագիտական թանգարան, Կենտրոնական բանկի Դիլիջանի մասնաճյուղի դրամի հավաքման և ցուցադրման բաժին, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն ձեռագրերի բաժին, Վայոց Ձորի մարզ՝ Սելիմի լեռնանցքում գտնվող Օրբելյանների իջևանատուն, Նորավանք վանական համալիր, Արարատի մարզ՝ Խոր Վիրապ եկեղեցական համալիր, ղեկ.՝ Ա. Մատինյան, հեռակա ուսուցում՝ Ն. Մարգարյան) և ուսումնականը (ՀՀ հուշարձաններ և թանգ., Իջևանի Սուրբ Ամենափրկիչ և Սուրբ Ներսես Շնորհալի եկեղեցիներ, Իջևանի պատմաերկրագիտական թանգարան, Հաղարծին և Գոշավանք եկեղեցական համալիրներ, Վայոց Ձորի մարզ՝ Սելիմի լեռնանցքում գտնվող Օրբելյանների իջևանատուն, Նորավանք վանական համալիր, Արարատի մարզ՝ Խոր Վիրապ եկեղեցական համալիր, Լոռու մարզ՝ Օձունի տաճար, Հաղպատի և Սանահինի եկեղեցական համալիրներ, Ախթալայի վանական համալիր և բերդ ղեկ.՝ Ա. Մկրտումյան) իրականացվել են հաջողությամբ:

2018-19թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում ունեցել ենք հետևյալն պատկերը. «Պատմություն» մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմել է 80%, II կուրսի առաջադիմությունը՝ 85,7%, III կուրսի առաջադիմությունը՝ 72,7%, իսկ IV կուրսի առաջադիմությունը՝ 70,6%: Եթե

փորձենք պատկերը ներկայացնենք նաև որակական առումով, ապա կստացվի հետևյալն, որ «Պատմություն» մասնագիտության I կուրսի կրթական որակը կազմում է 20%, II կուրսինը՝ 43%, III կուրսինը՝ 27%, իսկ IV կուրսինը՝ 47%:

Ներկայացնելով երկրորդ կիսամյակի քննաշրջանը ունեք հետևյալ պատկերը՝ «Պատմություն» մասնագիտության I կուրսի 6 ուսանողներից բոլոր առարկաներից «խառը» գնահատական ստացել է 4 ուսանող, «բավարար» գնահատական՝ 2 ուսանող:

«Պատմություն» մասնագիտության II կուրսի 8 ուսանողներից բոլոր առարկաներից միայն «գերազանց» և «լավ» գնահատական՝ 2 ուսանող, խառը գնահատական՝ 4 ուսանող, իսկ 2 ուսանող ստացել է անբավարար գնահատական:

«Պատմություն» մասնագիտության III կուրսի 11 ուսանողներից բոլոր առարկաներից միայն «գերազանց» և «լավ» գնահատական ստացել է 2 ուսանող, խառը գնահատական՝ 6 ուսանող, իսկ 3 ուսանող ստացել է անբավարար գնահատական:

Արդյունքում ստացվում է հետևյալն, որ «Պատմություն» մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 100%, II կուրսի առաջադիմությունը՝ 75%, III կուրսի առաջադիմությունը՝ 72,7%: Եթե փորձենք պատկերը ներկայացնենք նաև որակական առումով, ապա կստացվի հետևյալն, որ «Պատմություն» մասնագիտության I կուրսի կրթական որակը կազմում է 33,3%, II կուրսինը՝ 25%, III կուրսինը՝ 18,2%:

Մարտ-ապրիլ ամիսներին վերանայվել և հաստատվել է 2019-2023թթ. ուսումնական պլանը, համաձայն որի կազմվել է նաև 2019-2020 ուսումնական աշխատանքային պլանը, ամբիոնային ծանրաբեռնվածությունը:

Վերանայվել է 2018թ. Պատմություն մասնագիտության կրթական ծրագիրը, որը անցել է փորձաքննություն, կազմվել է նաև 2019թ. ծրագիրը:

Կազմվել է նաև կրեդիտային համակարգով ուսումնառության նոր ուղեցույցը:

Վերապատրաստումներ

Համաձայն ԵՊՀ ԻՄ ՌԾ-ի 1.2.1 խնդրի և ամբիոնի 2018-19 ուսումնական տարվա աշխատանքային պլանի՝ ամբիոնի մի շարք աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են ինչպես մասնաճյուղի կողմից կազմակերպվող,

այնպես էլ մասնաճյուղից դուրս կազմակերպվող վերապատրաստումներին, աշխատաժողովներին՝ և՛ որպես ունկդիր և՛ որպես դասավանդող:

Կրկին համաձայն 1.2.1. կետի ամբիոնում պարբերաբար անց են կացվել դասալսումներ՝ ինչպես ամբիոնի վարիչ, Կրթական ծրագրի պատասխանատուի կողմից, այնպես էլ կատարվել են փոխադարձ դասալսումներ՝ դասախոսների կողմից:

Համաձայն ՌԾ 1.4.3. կետի (այն է՝ Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար) ամբիոնի աշխատակիցները մասնակցել են «ԵՊՀ» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման, կրթագիտական ծրագրի՝ «Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ» մոդելում ներառված «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում» դասընթացին և այն հաջողությամբ ավարտել են՝ ստանալով համապատասխան կրեդիտը՝ Ն. Գրիգորյանը, Վ. Պողոսյանը, Ա. Ազատյանը:

Ամբիոնի աշխատակից Ն. Գրիգորյան հաջողությամբ ավարտել է նաև «Անգլերեն ակադեմիական միջավայրում»՝ ստանալով համապատասխան կրեդիտ (Ա2 մակարդակ):

2018թ. հոկտեմբերի 7-11-ին ամբիոնի դասախոս Վ. Պողոսյանը մասնակցել է ՌԴ Ղրիմի ինքնավար հանրապետության կողմից «ԱՊՀ և Արևելյան երկրների երիտասարդների» աշխատաժողովին:

2018թ. դեկտեմբերի 21-ին ամբիոնի աշխատակիցները մասնակցել են «Փոխներգործուն մեթոդներ որպես մասնագիտական համոզմունքների միջոց» թեմայով Ջ. Գուլամիրյանի կողմից վարվող դասին:

2019թ. հունվարի 17-ին ամբիոնի աշխատակիցները մասնակցել են «Տեսականի և գործնականի համադրումը ուսումնական գործընթացում» բ.գ.թ, դոցենտ Ա. Մարհատյանի վարած դաս-քննարկմանը:

2019թ. փետրվարի 12-13-ին ամբիոնի աշխատակիցները մասնակցել են Ս. Խարատրյանի կողմի վարվող «Ինչպես է սովորում մարդը» և «Կրթության ժամանակակից խնդիրները» թեմաներով դաս-քննարկմանը:

2019թ. մայիսի 8-ին ամբիոնի աշխատակիցները մասնակցել են «Ուսուցման ժամանակակից մեթոդներ» թեմայով Ա. Մարդանյանի կազմակերպած դաս-քննարկմանը:

2019թ. մայիսի 10-11-ին ամբիոնի աշխատակիցները մասնակցել են «Կրթական հետազոտությունները կրթական համակարգում» թեմայով՝ Մ. Գալստյանի վարած դաս-քննարկմանը:

2019թ. մայիսի 10-24-ը ամբիոնի դասախոս Վ. Պողոսյանը անց է կացրել «Հակամարտությունների փոխակերպում» թեմայով դասընթաց, որին մասնակցում էին Ն. Գրիգորյանը, Ա. Ազատյանը, Ա. Մկրտումյանը և «Պատմություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման մի շարք ուսանողներ:

2019թ. հունիսի 18-19-ին մասնակցել են «Առարկայական ծրագրերի մշակման ABC մոտեցում» երկօրյա դասընթացին (Ն. Գրիգորյան, Ա. Ազատյան, Ա. Մկրտումյան, Ն. Ճաղարյան):

2019թ. հունիսի 14-ին ամբիոնի աշխատակիցներ Ն. Գրիգորյանը և Ա. Մկրտումյանը մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով կազմակերպված /// աշխատաժողովին:

Ամբիոնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են բաց դասեր և կլոր սեղաններ՝ այսպես.

1. 2018թ. դեկտեմբերի 3-ին Վլ. Պողոսյանը և Գ. Բալասանյանը գրադարանում կազմակերպել են կլոր սեղան քննարկում՝ «ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության առաջնահերթությունները» թեմայով, որին մասնակցում էին ինչպես ամբիոնի աշխատակիցները՝ Ն. Գրիգորյան, Ա. Ազատյանը, Ա. Մկրտումյանը, Ն. Ճաղարյանը, այնպես էլ Պատմության մասնագիտության ուսանողները:

2. 2018թ. դեկտեմբերի 5-ին՝ պատմաբանի օրվա առթիվ ամբիոնի դասխոսներ Ն. Գրիգորյանը, Ա. Ազատյանը և Վլ. Պողոսյանը՝ Պատմության մասնագիտության ուսանողների հետ կազմակերպեցին բաց դաս-քննարկում:

3. 2019թ. մայիսի 16-ին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետում կայացավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված դաս-քննարկում, որը կազմակերպել էին Հայոց պատմության և

հասարակագիտության ամբիոնի դասախոսներ պ.գ.թ., դոցենտ Նաթելլա Գրիգորյանը և ասիստենտ Արա Ազատյանը՝ «Պատմություն» մասնագիտության ուսանողների հետ համատեղ:

4. 2019թ. մայիսի 25-ին «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի աշխատակիցների և «Պատմություն» մասնագիտության ուսանողների համար, «Քաղաքակրթական տեսությունները արդի պատմության խորապատկերների ներքո» դասախոսությամբ հանդես է եկել ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ՝ **պ.գ.դ., պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանը:**

Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում՝

1.2019թ. ապրիլի 20-ին մասնագիտական կողմնորոշման նպատակով պատմության բաց դաս իրականացվեց Իջևանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտների համար, որը վարեց Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ **Դավիթ Թինոյանը:**

2. Նոյեմբերյանի տարածաշրջանի մի շարք դպրոցներում մասնագիտական կողմնորոշման զրույցներ ի թիվս մասնաճյուղի մի շարք այլ աշխատակիցների վարեց նաև ամբիոնի ասիստենտ Ա. Ազատյանը:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Ամբիոնի աշխատակիցները աշխատանքներ են տարել ինչպես առանձին ուսանողներին աջակցելու ուղղությամբ, այնպես էլ համագործակցել են ուսանողական կառույցների հետ՝ ՈԻԳԸ-ի և ՈԻԽ –ի: Մասնավորապես Ն. Գրիգորյանը, Ա. Ազատյանը և Վլ. Պողոսյանը աջակցել են մասնաճյուղում իրականացվող «Ամենախելացին» խաղի կայացմանը՝ արժանանալով շնորհակալագրերի ԵՊՀ ԻՄ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարից:

2018թ. հոկտեմբերի 27-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ «Հինավուրց և երիտասարդ մայրաքաղաք» խորագրով ներբուհական գիտաժողովը, որի Պատմություն բաժանմունքում զեկույցներով հանդես եկան «Պատմություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Մարգարիտ Թամրազյանը, որը ներկայացավ «Երևա՞ն, թե Էրիվան» զեկույցով և 3-րդ կուրսի ուսանող Լարիդա Ղազարյանը «Անին՝ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք» զեկույցով:

Մասնագիտական աճ

1. Ամբիոնի ասիստենտ Ն. Գրիգորյանը հաշվետու ժամանակահատվածում (Հր.՝ N982, 24.01.2019թ.) ստացել է դոցենտի պաշտոն, դասախոս Ա. Ազատյանը (Հր.՝ N689, 21.01.2019թ.)՝ ասիստենտի:

2. Ամբիոնի երկու հայցորդները՝ Վլ. Պողոսյանը և Ա. Ազատյանը մասնակցել և հաջողությամբ հանձնել են որակավորման մի շարք քննություններ:

Գիտական գործունեություն

Ընթացիկ ուստարում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են նաև գիտական աշխատանքներ: Մի շարք հոդվածներով և զեկուցումներով (այդ թվում նաև մենագրություն, դասագիրք) հանդես են եկել պ.գ.դ., պրոֆ. Ռ. Նահապետյանը /Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող, Ակունք, 2018, թիվ 1/18, էջ 5-19/, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյան /Լևոն 2-րդի արտաքին քաղաքական ուղեգիծը 1280-ական թթ., Պատմություն և մշակույթ, 2018, էջ 210-218/, ք.գ.թ., ասիստենտ Հ. Մովսեսյան /Լավ կառավարումը որպես ՀՀ ազգային անվտանգության ապահովման արդիականացման երաշխիք, Մխիթար Գոշ, թիվ 3/48, 2018, էջ 329-334: Կոռուպցիան որպես Հայաստանի Հանրապետություն ազգային անվտանգության սպառնալիք, Ակունք, 2018, թիվ 3/19, էջ 181-188: Ազգային անվտանգության ընդարձակման օրակարգը և քաղաքական իշխանության լեգիտիմության հիմնախնդիրները, Մխիթար Գոշ, թիվ 3/48, 2018, էջ 334-338/, պ.գ.թ., դոցենտ Գ. Բալասանյան /Հայաստանի եվրասիական ընտրության քաղաքակրթական և քաղաքատնտեսական հիմքը, Բանբեր Երևանի համալսարանի, 2018, թիվ 1/25, էջ 27-34: Արցախյան շարժում-ինքնորոշում թե՛ անջատողականություն: Հետահայացք 30 տարվա հեռավորությունից, Լրատու, 2018, էջ 29-33/, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյան /1921թ. Փետրվարյան ապստամբության պարտությունը, Ակունք, 2018, թիվ 4/20, էջ 5-10: «Հայոց պատմության աղբյուրագիտություն» առարկայի բուհական դասավանդման մի շարք առանձնահատկությունների մասին, Ակունք, 2018, էիվ 3/19, էջ 241-246/, ասիստենտ Ա. Ազատյանը /Հայաստանի Առաջին Հանրապետության անկման պատմության պատմագրության շուրջ, Ակունք, 2018, թիվ 3/19, էջ 81-90/, հրատարակված մենագրությունով՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը /Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2018/, իսկ հրատարակված դասագրքով՝ Ն.

Գրիգորյան և Ա. Ազատյան /Հայաստանի Առաջին Հանրապետություն. դեմքեր, դեպքեր, Երևան, 2018/:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆԻ

2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Մանկավարժության և հոգեբանության ամբիոնն ունի 27 աշխատակից, այդ թվում՝

- ❖ Չորս գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- ❖ մեկ դոցենտ,
- ❖ տասներկու գիտությունների թեկնածու, որից 7-ը դոցենտ, 5-ը ասիստենտ,
- ❖ երկու ասիստենտ,
- ❖ յոթ դասախոս,
- ❖ մեկ գործավար-օպերատոր:

«Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին:

Հաշվետու 2018-2019թթ. ուստարվա ժամանակահատվածում ամբիոնում ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/, որոնց մեջ տեղայնացվել են ժամանակակից գիտական տեսությունները և հայեցակարգերը:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել են պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած առկա ուսուցման համակարգում 11 շրջանավարտներից 6-ը ստացել են «գերազանց», 5-ը՝ լավ: Անբավարար գնահատական չի գրանցվել: Հեռակա ուսուցման համակարգում ունեցել ենք որակական մի շարք խնդիրներ: Մի շարք խնդիրներ կանխելու նպատակով ամբիոնում սահմանված կարգով իրականացվել են հեռակա ուսուցման համակարգում սովորողների կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքը: Մեծ ուշադրության են արժանացել հեռակա ուսուցման համակարգով սովորող ՏՄՄ

3-րդ, հոգեբանություն 3-րդ և 4-րդ կուրսերի կուրսայինների պաշտպանությունները: Առկա են եղել մի շարք խնդիրներ, որոնք վեր են հանվել և մշակվել դրանց հետագա կանխարգելման ռազմավարություն:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո քննական հանձնաժողովի նախագահ՝ Ն. Հակոբյանը ներկայացրել է իր առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ, և հայտնել իր գոհունակությունը տարվող աշխատանքներից:

Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար իրականացվել են դասալսույններ ամբիոնի վարիչի և դեկանի կողմից: Ամբիոնի կողմից նախատեսված մանկավարժական և արտադրական պրակտիկաները հաջողությամբ իրականացվել են:

Ընթացիկ, եզրափակիչ, հանրագումարային քննություններն ընթացել են համաձայն ընդունված ժամանակացույցի:

Այս տարի առաջին անգամ ամբիոն են ուղարկել մագիստրոսական թեզերի գրախոսում, որը ամբիոնի մասնագետների կողմից կատարվել է պատշաճ մակարդակով:

2019թ. մայիսի 16-ին ամբիոնին կից բացվել է հոգեբանական կենտրոն, որի շրջանակներում նպատակ ունենք իրականացնելու խորհրդատվական, թերապևտիկ, հոգեախտորոշիչ խմբային և անհատական աշխատանքներ, ինչպես նաև թրենինգներ ու սեմինարներ:

Ամբիոնում ձևավորվել են խմբեր մասնագիտական կոլեկտիվ դասագրքերի մշակման նպատակով:

Ամբիոնի մի շարք աշխատակիցներ և ուսանողներ այս տարի ապրիլին մասնակցել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովին, ստացել մասնակցության հավաստագրեր:

2018-2019 ուստարում ամբիոնի դասախոսները հրատարակել են հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, ստացել են գիտական աստիճաններ և կոչումներ:

Այս տարի ԲՈԿ-ի կողմից ամբիոնի դասախոսներից Վ. Բրուսյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում, Ք. Հովհաննիսյանին և Ա. Առաքելյանին՝ դոցենտի, Ա.

Միմոնյանին՝ գիտությունների թեկնածուի կոչումներ: Ինչպես նաև ամբիոնի դասախոսներից Գ. Հարությունյանն ընդունվել է հոգեբանության ասպիրանտուրա:

2018-2019 ուստարում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են՝

- ❖ 17 հոդված, որոնցից մի քանիսը SCOPUS և PIIHC միջազգային մատենագիտական հանդեսներում,
- ❖ 5 մասնակցություն գիտաժողովի,
- ❖ 1 ուսումնական ձեռնարկ, 1 հանձնարարված է տպագրության,
- ❖ 6 դասագիրք,
- ❖ Ատենախոսություն – Միմոնյան Աննա /մանկ. գիտ. թեկն./

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԾ գործողությունը	Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում	Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)	Ի՞նչ չի իրականացվել և ի՞նչու	Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում
Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:	Դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ) բոլոր առարկայական դասընթացների համար:	Ամբիոնում առկա են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ) բոլոր առարկայական դասընթացների համար:		
Վերապատրաստել դասախոսական կազմը	Ավելացնել դասախոսական կազմի գիտական, մեթոդական մանկավարժական հմտությունները	Դասախոսները մասնակցել են ԵՊՀ հետբուհական կրթության բաժնի, Հայաստանում Բրիտանական Խորհրդի, Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված, “Մանմար” հրատարակչության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:		

Ավելացնել հրատարակվող հոդվածների թիվը գիտական ամսագրերում	Խթանել դասախոսական կազմի գիտական գործունեությունը	Լույս են տեսել ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած 5 գիտական հոդված: Ամբիոնի դասախոսներից մեկը պաշտպանել է դոկտորական, իսկ մեկը թեկնածուական ատենախոսություն:		
Լայնորեն կիրառել ժամանակակից տեխնոլոգիաները դասապրոցեսում, այդ թվում համակարգչային լսարան, համացանց, ինտերակտիվ մեթոդներ:	Ավելացնել ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտում գրագիտությունը	Ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունքում ներկայացվել են ինքնուրույն PPT զեկուցումներ և ռեֆերատներ:		
Մասնացել միջազգային, հանրապետական, ներքուհական գիտաժողովներ և գիտական սեմինարներ:	Խթանել դասախոսական կազմի գիտական գործունեությունը	Ամբիոնի դասախոսները մասնակցել են 2017 թվականի ապրիլին ԵՊՀ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ԼՄՀ ամբիոնի կողմից կազմակերպված “ Մշակույթը լեզվի պրիզմով” գիտաժողովին, ՀԱԼԴԱ (AELTA)- ի կողմից կազմակերպված 14-րդ տարեկան գիտաժողովին:		
Կազմակերպել միջազգային, հանրապետական, ներքուհական գիտաժողովներ և գիտական սեմինարներ:		Ամբիոնը ներգրավվել է ԵՊՀ ԻՄ-ում կայացած “1918 թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության արարման գործընթացը” խորագրով հանրապետական գիտաժողովի կազմակերպմանը՝ նվիրված առաջին հանրապետության հիմնադրման հարյրամյակին, Ամբիոնի կողմից կազմակերպվել են հատուկ դասեր, որոնք վարել են ԵՊՀ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետից հրավիրված դասախոսներ, այդ թվում ԼՄՀ ամբիոնի վարիչ Բ.Գ.Գ., պրոֆ. Շ. Պարոնյանը: «Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի վարիչը մարտի 23- ին իրականացրեց «Գույներն ու գունանվանումները լեզվամշակույթում» թեմայով գիտագործնական սեմինար:	Չի կազմակերպվել միջազգային գիտաժողով, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:	Գտնել անհրաժեշտ ֆինանսավորում բուհի կամ բարեգործական ընկերությունների աջակցությամբ:

Կազմակերպել միջոցառումներ ուսանողների մասնակցությամբ	Ավելացնել ուսանողների ներգրավվածությունը բուհական կյանքին	«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ակտիվորեն մասնակցել են ամբիոնի կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումներին, այդ թվում՝ «Եվրոպական լեզուների օր», «Ամանորյա միջոցառում», «Գեղեցկության և մայրության տոն», «Օսկարակիր ֆիլմեր», «Այն հերոսը, որով ես հիանում եմ», «Բայրոնի պոեզիան», «Բոլոր Սրբերի տոնը», «Հայաստանի տեսարժան վայրերը» «Բուսական և կենդանական աշխարհ» բաց դաս Կանաչ Միմֆոնիա այգում և այլն: Բոլոր միջոցառումների աշխատանքային լեզուն անգլերենն էր:		
Խրախուսել ուսանողների մասնակցությունը մրցույթների և աշխատաժողովների	Ավելացնել ուսանողների ներգրավվածությունը գիտական և կրթական ծրագրերի	«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները մասնակցել են “Write On! Competition 2018” էսսեների միջազգային մրցույթին, որը կազմակերպել էր ԱՄՆ խաղաղության կորպուսը, և մի քանի ուսանողներ զբաղեցրել են առաջին տեղեր:		
Կազմակերպել ակումբներ ուսանողների համար	Ավելացնել ուսանողների ներգրավվածությունը բուհի գիտական և կրթական կյանքում:	Ամբիոնի ծրագրի պատասխանատուն կազմակերպել է “Գրքասեր” ակումբը, որի հանդիպումների ընթացքում քննարկվել են անգլալեզու գրողների հետաքրքիր աշխատանքներ:		
Մտանալ միջազգային դրամաշնորհային ծրագրերին:	Ընդլայնել գիտական և մանկավարժական գործունեությունը		Չի իրականացվել, քանի որ ունի շարունակական բնույթ և օտար լեզուների բանասիրության ոլորտում դրամաշնորհների թիվը խիստ սահմանափակ է:	Շարունակել դիմումները համապատասխան մարմիններին:

Ձեռնարկել ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը գիտակրթական ծրագրերին:	քայլեր մասնաճյուղի ԵՊՀ	Նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը:		Դեռևս չի իրականացվել, քանի որ ունի շարունակական բնույթ:	
--	------------------------	--	--	---	--

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆԻ 2018-19 ՈՒՍՏԱՐԿԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/միջոցառում/ծրագիր	ՌԾ-ի նպատակի համարը, ինդքի համարը Ժամկետը	Համագործակցող ստարաբաժանում	Ակնկալվող արդյունքներ	Ինչ արդյունքներ են ձեռք բերվել	Ինչ չի իրականացվել և ինչու	Ինչպես եք պլանավորել իրականացնել և ինչ ժամկետներում
Վերանայվել և վերամշակվել են «Ֆրանսերեն լեզու և գրականություն» բաժնի կրթական գործող ծրագրերը որոնք միտված են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելության իրագործմանը: Հստակեցվել են ծրագրի նպատակները, կրթական վերջնարդյունքները, շրջանավարտների կարիերայի հետագա հնարավորությունները: Դասախոսները, ուսանողները, շրջանավարտները, գործատուները ակտիվ մասնակցություն են ունեցել նոր ծրագրի հայտի մշակման աշխատանքներին:	ՌԾ 1.1.3 10.2018-07.2019թ.	Ուսումնամեթոդական վարչության ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ Ծրագրերի պատասխանատուներ	Ունենալ «բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան եցված բակալավրի կրթական ծրագրեր			
Թարմացվել և վերամշակվել են պրակտիկայի անցկացմանն ուղղված ծրագրերը:	ՌԾ 1.1.5 09-2018-09.2019 թ.	Ուսումնամեթոդական վարչության ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ	Ունենալ ավելի արդյունավետ մեխանիզմներ պրակտիկայի ընթացքը հսկելու համար	Ընտրված են պրակտիկայի անցկացման առավել արդյունավետ ձևեր ֆայլեր անել, համաձայնագրի շրջանակներում ուսանողների պրակտիկան	Հասնել այն բանին, որ ուսանողները պրակտիկան անցկացնեն միևնույն դպրոցում ամենալավ մասնագետների մոտ	10.12.2018թ.

				կազմակերպել Ֆրանսիայի Վալանս քաղաքի Մաեստրիս համալսարանում		
Հաշվի առնելով արդյունավետ և ձևավորող գնահատման կարևորությունը, մշակվել են ստուգման և գնահատման նոր ձևեր, որոնք շեշտը դնում են ուսանողի տրամաբանության վրա	ՌԾ 1.2.3 10.2018-07.2019 թ.	ՌԻՄ ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ	Գնահատման արդյունավետությունը բարձրացնելու համար թեստերի ձևերը դարձվել են ավելի բազմազան, ավելի շատացնել տարբերակները	Բոլոր կուրսերում նկատելի է գնահատականների համամասնություն		
Իրականացնել փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը	ՌԾ 1.2.5 01.09.2018-12.2019 թ.	Տնօրեն Ուսումնամեթոդական վարչության ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ	Դասընթացների համալրված փաթեթներ	Բոլոր գործնական և տեսական փաթեթների համալրում		Մինչև 20.02.2019 թ. ներկայացնել 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների պորտֆոլիոները
Կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների վերանայում և թարմացում	ՌԾ 1.2.6 01.10.2018-2019թ.թ.	Ուսումնամեթոդական վարչության ֆակուլտետներ Ամբիոններ ՄԿՈԱ բաժին	Խորհրդատվությունների իրականացում, ինքնուրույն և արդիական աշխատանքներ	Աշխատանքները ընթացքի մեջ են	Կուրսային աշխատանքների ճիշտ բաշխումը ըստ կիսամյակների	Խորհրդատվությունների իրականացում
Կազմակերպել գիտական կոնֆերանսներ լեզվաբանական խնդիրների մասին	ՌԾ 2.1.3	Ֆակուլտետներ Ամբիոններ ՌԻԳԸ	Հետազոտական ունակությունների զարգացում	Ուսանողների կարողությունների և հմտությունների զարգացում	Գիտական վերլուծական մտածողություն	Գիտաժողով՝ նվիրված դասավանդման ժամանակակից մեթոդներին
Ֆրանսերեն լեզվով հրատարակվող հոդվածներ հանրապետության հեղինակավոր ժողովածուներում	Ռ.Ծ 2.3.2 2018-19թ.թ.	Ամբիոն	Դասախոսների գիտական հետաքրքրությունների զարգացում	«Ակունք» հանդեսի 2017-18 թ.թ. համարում ֆրանսերեն լեզվի ամբիոնի բոլոր դասախոսների հոդվածները տպագրվել են	Քիչ են ուսումնամեթոդական հոդվածները	10. 12-2018թ. նոր հոդվածների պատրաստում
Աջակցություն երիտասարդ դասախոսների նորագույն ծրագրերին	Ռ.Ծ 4.1.5 10.2019թ.	Ուսումնամեթոդական վարչության ԱԿԲ Ֆակուլտետներ Ամբիոններ	Երիտասարդ դասախոսական կազմի ուսումնամեթոդական պատրաստվածության բարձրացում	Դասերի 80%-ը դասախոսները անց են կացնում ֆրանսերենի ուսուցման սրահում՝ նորագույն մեթոդներով	Բավարար վիճակում չեն ֆրանսերենի տեսական դասընթացները, որոնք մշտապես կատարելագործման կարիք ունեն	Բարձրացնել տեսական դասընթացների ընթացքում նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԲԻՈՆԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈԾ գործողությունը	Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում	Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)	Ի՞նչ չի իրականացվել և ինչու	Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում
1.2.2. Ջարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:	Դասախոսական կազմի ներուժի զարգացում:	Իրականացվել են փոխադարձ դասալուսման նուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը: Ամբիոնի դասախոսներից 4-ը 2019 թ. հունիսին ԲՈԿ-ի կողմից ստացել են դոցենտի գիտական կոչում:		
1.2.3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունավետ և ձևավորվող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:	Ուսանողների գիտելիքների անաչառ գնահատում, բավարարվածություն՝ գնահատման չափորոշիչներից:	Մշակվել են գնահատման հստակ չափորոշիչներ, որոնք արձանագրված են դասընթացների ծրագրային փաթեթներում (պորտֆոլիոներում):	Չեն ստեղծվել համապատասխան ձեռնարկներ դրանց անհրաժեշտության բացակայության պատճառով:	Ոչինչ չի պլանավորվել:
1.2.5. Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:	Ուսանողների մասնագիտական գիտելիքների ապահովում, ուսումնառության գործընթացի բարելավում:	Կազմվել են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ)՝ բոլոր առարկայական դասընթացների համար:		Ըստ անհրաժեշտության՝ վերանայել և փոփոխել:
1.2.6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագործությունը կանխելու նպատակով:	Ուսանողի ինքնուրույնության և սեփական կարողությունների ներուժի բարձրացում, ուսանողների ակադեմիական ազնվության ապահովում:	Ուսանողների հետ անցկացվել են գրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելվել ու կանխվել են մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից: Իրականացվել է կուրսային և ավարտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հետևողական վերահսկողություն: Գրվել և պաշտպանության են ներկայացվել գիտական տեսակետից բարձրաժեշտ կուրսային և ավարտական աշխատանքներ, որոնցից վերջինների		

		մասին իր գոհունակությունն է նաև հայտնել 2018-19 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության քննական հանձնաժողովի նախագահ, ք. գ. դ. Վարդան Դերիկյանը (առկա է գրավոր հաշվետվությունը):		
1.3.3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:	Դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատում:	Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնվել են նկատված թերությունները, արվել են դիտարկումներ, քննարկվել են ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցիալոգիայի տվյալները, արվել են հետևություններ:		
1.4.1. Ներդրել ԵՊՀ-ում մշակված վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:	Ժամանակակից առցանց հնարավորությունների կիրառությունն ուսուցման գործընթացում:	Արդյունք չի արձանագրվել:	Դեռևս մասնաճյուղում ներդրված չէ վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:	Պլանավորել ենք իրականացնել մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ՝ ամբիոնի յուրաքանչյուր դասախոսից պահանջելով առնվազն մեկ դառնթացի վեպ-ուսուցման էլեկտրոնային տարբերակ: Մասնաճյուղում նախատեսվում է հունիս-հուլիս ամիսներին անցկացնել դասընթաց ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման հնարքներին տիրապետող վերաբերյալ:
1.4.2. Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:	Ուսումնառության էլեկտրոնային մշակված ռեսուրսների ներդրում:	Արդյունք չի արձանագրվել: Չկա ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ուղղորդող /ղեկավար ձեռնարկ: Չկա համակարգից օգտվելու ուղեցույց:	Դեռևս մասնաճյուղում ներդրված չէ վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:	Պլանավորել ենք իրականացնել մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ՝ ամբիոնի յուրաքանչյուր դասախոսից պահանջելով առնվազն մեկ դառնթացի վեպ-ուսուցման էլեկտրոնային տարբերակ: Մասնաճյուղում նախատեսվում է հունիս-հուլիս ամիսներին անցկացնել դասընթաց ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման հնարքներին տիրապետող վերաբերյալ:

<p>1.4.3. Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:</p>	<p>Կիրառել էլեկտրոնային ռեսուրսներ, ապահովել դասաժամի արդյունավետություն:</p>	<p>Արդյունք չի արձանագրվել: Չկա ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ուղղորդող /ղեկավար ձեռնարկ: Չկա համակարգից օգտվելու ուղեցույց:</p>	<p>Դեռևս մասնաճյուղում ներդրված չէ վերուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:</p>	<p>Պլանավորել ենք իրականացնել մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ՝ ամբիոնի յուրաքանչյուր դասախոսից պահանջելով առնվազն մեկ դաշնացի վեբ-ուսուցման էլեկտրոնային տարբերակ: Մասնաճյուղում նախատեսվում է հունիս-հուլիս ամիսներին անցկացնել դասընթաց ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման հնարքների տիրապետող վերաբերյալ:</p>
<p>1.4.5. Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:</p>	<p>Ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպում:</p>	<p>Կրթական ծրագրերի համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ և տեղադրվել համացանցում:</p>		
<p>1.4.6.ա/ Ամբիոնի մասնագիտական ներուժով կազմակերպել ուսումնական վերապատրաստման դասընթացներ Երիտասարդ դասախոսների համար:</p>	<p>Երիտասարդ դասախոսների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում:</p>	<p>Իրականացվել է դասընթաց «Տեսականի և գործնականի կապը դասապրոցեսում» /դաս.՝ Ա. Սարհատյան/:</p>		<p>Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի դասախոսների ուժերով նախատեսվել են այլ թեմաներով դասախոսություններ:</p>
<p>1.4.6.բ/ Ամրապնդել միջամբիոնային կապերը:</p>	<p>Միջամբիոնային կապերի ամրապնդմամբ ձեռք բերել համատեղ գործունեությամբ պայմանավորված գիտական արդյունքներ, բարձրացնել Իմ-ի վարկանիշը:</p>	<p>Օտար լեզուների ամբիոնի հետ համագործակցելով՝ ամբիոնի դասախոսները ստանձնել են արտասահմանյան ժամանակակից հայտնի մի շարք հեղինակների տարբեր ստեղծագործությունների անգլերենից հայերեն թարգմանությունների խմբագրական աշխատանքներ:</p>		<p>Ընթացքի մեջ է:</p>
<p>1.4.6.գ/ Աջակցել և խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու մարզային և համայնքային տարբեր միջոցառումների, հանրապետական և տարբեր գիտաժողովների:</p>	<p>Ամբիոնի դասախոսական աշխատակազմի խորհրդատվություն և աջակցություն ուսանողներին, ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացում, մասնագիտության և հեղինակության</p>	<p>2019 թ. մարտի 2-ին ԻՄ-ում ամբիոնի և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳԸ-ի նախաձեռնությամբ ԻՄ-ում հրավիրվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված հայ բարբառագիտության արդի խնդիրներին: Մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր, որոշվել է զեկուցման նյութերը վերածել գիտական հոդվածների և տպագրել առանձին ժողովածուով՝ կցելով տարբեր բարբառներով ընթերցված</p>		

	բարձրացում:	գեղարվերաստական նյութերի ձայներիզները: 2019 թ. մայիսի 14-ին մեր ուսանողներից 2-ը (ղեկավարներ՝ Բ. Գ. թ., դոցենտ Ա. Սարհատյան, Բ. Գ. թ., դոցենտ Լ. Թումանյան) զեկուցումներ են կարդացել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳԸ-ի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում կազմակերպված ուսանողական գիտաժողովում՝ նվիրված Հ. Թումանյանի 150-ամյակին: 2019 թ. երկրորդ կիսամյակում ամբիոնի դոցենտ, Բ. Գ. թ. Աիդա Սարհատյանի նախաձեռնությամբ կազմակերպվել և անց է կացվել համահամալսարանական (ԻՄ) ստեղծագործական շարադրության մրցույթ՝ «Իմ Թումանյանը» խորագրով: Եզրափակիչ փուլ անցած լավագույն 3 շարադրության հեղինակները արժանացել են խրախուսական պարգևների:		
1.4.6.դ/ Ապահովել հեռակա ուսուցման դասընթացներն համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	Հեռակա ուսուցման դասընթացների արդյունավետ կազմակերպում:	Հեռակա ուսուցման դասընթացների համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ:		
1.4.7. Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:	Արդի պահանջներին համապատասխանող ուսուցման ապահովում:	Արդյունք չի արձանագրվել: Չկա ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ուղղորդող /ղեկավար ձեռնարկ: Չկա համակարգիչ օգտվելու ուղեցույց:	Դեռևս մասնաճյուղում ներդրված չէ վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:	Պլանավորել ենք իրականացնել մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ՝ ամբիոնի յուրաքանչյուր դասախոսից պահանջելով առնվազն մեկ դասընթացի վեբ-ուսուցման էլեկտրոնային տարբերակ: Մասնաճյուղում նախատեսվում է հունիս-հուլիս ամիսներին անցկացնել դասընթաց ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման հնարքների ստիբալետու վերաբերյալ:
2.1.1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակի կազմում և գիտահետազոտական գործունեության արդյունավետությ	2018-2019 ուստարվա ընթացքում ամբիոնի դասախոսների հեղինակությամբ հրատարակվել է 2 գիտական հոդված /Վ. Ավագյան, «Պետրոս Դուրյանի «Տրտունջ»-ի նորովի մեկնաբանության փորձ» («Բանբեր Երևանի համալսարանի», «ԵՊՀ» հրատարակչություն, N 2 /26/, 2018), Վ. Ավագյան, «Դավիթ Անհաղթը հայկական ավանդություններում» («Հայագիտության	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ չի կազմվել, քանի որ դժվարանում ենք դեռ հստակ պատկերացնել	Անորոշ է:

ընդունված ցուցանիշներով:	ան բարձրացում:	հարցեր», թիվ 3/15/, 2018) և 1 լրագրողական (Ա. Հասանյան, «Մերօրյա խոհերի արձագանքը» («Գրական թերթ», թիվ 13, 2019)/: Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ չի կազմվել:	գնահատման չափանիշները:	
2.1.2. Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրատարակումները խրախուսելու համար:	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում: Ազդեցության գործակցով ամսագրերում հրատարակվող հոդվածների քանակի ավելացում:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրատարակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրատարակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել, քանի որ դեռ հստակ չենք պատկերացնում, թե ինչպես կարելի է խրախուսել հեղինակներին:	Անորոշ է, ոչինչ չի պլանավորվել:
2.1.3. Խրախուսել ՈւԳՀ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում գիտական աշխատանքի նկատմամբ և նրանց կողմից իրականացվող գիտական աշխատանքների ծավալի մեծացում:	ԻՄ-ի ՈւԳՀ-ի և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳՀ-ի հետ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնը և նույն մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ունեն սերտ կապեր և համագործակցության բարձր ակտիվություն: 2018 թ. նոյեմբեր ամսին ԵՊՀ ԻՄ մասնաճյուղ են հրավիրվել «Վարդանանք» հայրենասիրական ակումբի ղեկավարներն ու ակտիվը: Հանդիպմանը մասնակցել է նաև ԱՄՄԱԱ-ի «Վան» գործողության հրամանատար Վազգեն Սիսիլյանը: Փոխադարձ այցով ԻՄ-ի ՈւԳՀ-ի անդամներն ու մասնաճյուղի այլ ուսանողներ մասնակցել են ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈւԳՀ-ի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը՝ նվիրված Ղարաբաղյան ազատամարտի հերոսներին: 2019 թ. մարտի 2-ին ԻՄ-ում ամբիոնի և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳՀ-ի նախաձեռնությամբ ԻՄ-ում հրավիրվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված հայ բարբառագիտության արդի խնդիրներին: Մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր, որոշվել է զեկուցման նյութերը վերաձել գիտական հոդվածների և տպագրել առանձին ժողովածուով՝ կցելով տարբեր բարբառներով ընթերցված գեղարվեստական նյութերի ձայներիգները: 2019 թ. մայիսի 14-ին մեր ուսանողներից 2-ը զեկուցումներ են կարդացել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳՀ-ի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում կազմակերպված ուսանողական		

		<p>գիտաժողովում՝ նվիրված Հ. Թումանյանի 150-ամյակին:</p> <p>2019 թ. երկրորդ կիսամյակում ամբիոնի դոցենտ, ք. գ. թ. Արդա Սարհատյանի նախաձեռնությամբ կազմակերպվել և անց է կացվել համահամալսարանական (ԻՄ) ստեղծագործական շարադրության մրցույթ՝ «Իմ Թումանյանը» խորագրով: Եզրափակիչ փուլ անցած լավագույն 3 շարադրության հեղինակները արժանացել են խրախուսական պարգևների:</p>		
<p>2.2.1. Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրականացմանը:</p>	<p>Մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապի ամրապնդում՝ մարզում գիտական-մշակութային միջավայրի զարգացման նպատակով:</p>	<p>Ակտիվ համագործակցություն է ձևավորվել ամբիոնի և ԵՊՀ-ի բանասիրական ու ժուռնալիստիկայի ֆակուլտետների հետ:</p> <p>2019 թ. մայիսի 11-ին ամբիոնի՝ Հովհ. Թումանյանի 150-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովին զեկուցումներով մասնակցել են ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 1 և բանասիրական ֆակուլտետի 4 դասախոսներ:</p> <p>Ուստարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են ծագումով տավուշեցի անհատ ստեղծագործողների գրքերի շնորհանդեսներ, որտեղ ամբիոնի դասախոսներն ու ուսանողները արժևորել են հեղինակների ստեղծագործությունները:</p>		
<p>2.2.2. Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին:</p>	<p>Համագործակցային փոխհարաբերություններ ձևավորում տարածաշրջանային և բուհերի հետ:</p>	<p>Համագործակցային փոխհարաբերություններ տարածաշրջանային բուհերի հետ չեն ձևավորվել:</p>	<p>Համագործակցային փոխհարաբերություններ տարածաշրջանային բուհերի հետ չեն ձևավորվել մասնագիտական հետաքրքրությունների բացակայության պատճառով:</p>	<p>Անորոշ է, ոչինչ չի պլանավորվել:</p>
<p>2.2.3. Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի մշակում:</p>	<p>Տարածաշրջանի կրթօջախների կարիքների վերհանում և այդ կարիքներին համապատասխան հետազոտական և կրթական ծրագրերի մշակում:</p>	<p>Ամբիոնի վարիչ, ք. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են բազմաթիվ այցելություններ տարածաշրջանի տարբեր համայնքեր, դպրոցներ՝ Բերքաբեր, Ագատամուտ, Հովք, Լուսաձոր: Ուսանողների նախաձեռնությամբ գրառվել են տվյալ համայնքի հիմնադրման պատմությունը վկայող տարբեր փաստեր ու ավանդություններ, համայնքի հիմնադիր ընտանիքների վերաբերյալ բանահյուսական պատմություններ, որոնք ընթերցվել, մատուցվել են հանդիպումների ժամանակ:</p> <p>Հովք համայնքի դպրոցում 2018 թ. հոկտեմբերին կազմակերպվել է համալսարանական ուսանողուհի, համայնքաբնակ Սուսաննա Բալասանյանի քնարական բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսը:</p> <p>Տեղերում համայնքների ղեկավարների, ուսուցիչների և աշակերտության հետ</p>	<p>Ծրագիրը մնացել է թերի, քանի որ ամբիոնի նախաձեռնությունների, այցելությունների, առաջարկությունների համայնքներն առայժմ արձագանք չեն տվել:</p>	<p>Անորոշ է. սպասում ենք դպրոցների տնօրինությունների առաջարկություններին:</p>

		կազմակերպել են հանդիպումներ, իրականացվել ընդհանուր քննարկումներ: Ընդառաջ գալով մասնավորապես ուսուցիչների և աշակերտության ցանկություններին և առաջարկներին՝ կազմվել են ծրագրեր՝ հետագայում կապը ամրապնդելու, այցելությունների կամ հեռահար ուսուցման եղանակով օժանդակելու աշակերտներին, մասնավորապես ավարտական դասարանների՝ ավելի լավ նրանց նախապատրաստելու ընդունելության միասնական քննություններին:		
2.3.1. Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի մասնաճյուղի աշխատողների հրապարակումները:	Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի դասախոսների հոդվածների հրապարակում և դրանց թվի աճ:	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել:	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել, քանի որ միջազգային շտեմարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի դասախոսները հրապարակումներ չեն ունեցել:	Անորոշ է, ոչինչ չենք պլանավորել:
2.3.2. Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող հոդվածների թիվը «Ակունք» ժողովածուում:	«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում օտար լեզուներով հոդվածների թվի աճի ապահովում:	Որևէ արդյունք չկա, քանի որ «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում ամբիոնի դասախոսներից ոչ մեկը օտար լեզվով կամ թարգմանված գիտական հոդված չի հրապարակել:	Ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակը դուրս չի եկել միջազգային միջավայր:	Անորոշ է:
2.3.3. Կազմակերպել գիտական, գիտական-գեղարվեստական միջոցառումներ, հանրապետական, միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը:	Համագործակցային փոխհարաբերությունների ձևավորում տարբեր գիտական կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի գիտական վարկանիշի բարձրացում, մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների մասնակցության աճ:	2018 թ. սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի և դպրության օրը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տոնական միջոցառմամբ մեկնարկեց նոր ուսումնական տարին: Միջոցառման կազմակերպչական հարցերում ՈւԽ-ին օժանդակել էր ամբիոնի դասախոս Ա. Հասանյանը: 2018 թ. նոյեմբերի 30-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանում տեղի ունեցավ հանդիպում հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսների, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների և ժամանակակից գրող, ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտ Նաիրա Փիրումյանի ու գրականագետ, գրաքննադատ Անի Փաշայանի հետ: Հանդիպման նպատակն էր քննարկել Նաիրա Փիրումյանի «Տերեր» ժողովածուի պատմվածքները: 2019 թ. ապրիլի 3-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ «Նրանք ապրում են» խորագրով գրական-երաժշտական հուշ-ցերեկույթը՝ նվիրված Ապրիլյան պատերազմում զոհված հայորդիների սուրբ հիշատակին: Միջոցառումը կազմակերպվել էր հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Ալիսա Հասանյանի հետ համագործակցությամբ: 2019 թ. ապրիլի 15-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանում տեղի ունեցավ ամերիկաբնակ գրող Վարդգես		

		<p>Դավթյանի վերջին տարիներին հրատարակած գրքերի շնորհանդեսը, որը կազմակերպվել էր Տավուշի մարզային և ԵՊՀ ԻՍ-ի մասնաճյուղի գրադա-րանների համատեղ նախա-ձեռնությամբ:</p> <p>Վարդգես Դավթյանի «Հեքիաթներ Ամերիկայի մասին» աշխատությունը գրականագիտական վերլուծության ենթարկեց ԵՊՀ ԻՍ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Աիդա Սարհատյանը:</p> <p>«Մտորումներ թամբի վրա» աշխատությանն անդրա-դարձավ ԵՊՀ ԻՍ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Ալիսա Հասանյանը:</p> <p>2019 թ. ապրիլին ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Աիդա Սարհատյանի նախաձեռնությամբ կազմակերպվել և իրականացվել է գրական-գեղարվեստական միջոցառում՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյակին: Միջոցառմանը ներկա են եղել հյուրեր, մարզի հոգևոր թեմի հոգևորականներ: Ամբիոնը 2019 թ. մայիսի 11-ին ԻՍ-ում հրավիրել է հանրապետական գիտաժողով՝ նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին, որին մասնակցել են հանրապետության տարբեր գիտակրթական հաստատությունների գիտնականներ, գիտաշխատողներ, ուսուցիչներ՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրակ. պատմ. ամբիոնից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնից, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից, Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնից, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնից, Իջևանի հիմնական դպրոցներից, ինչպես նաև ԻՍ-ի հայոց լեզվի և գրականության և անգլերեն լեզվի և գրականության ամբիոններից: Ընթերցվել է 24 գիտական զեկուցում: Զեկուցումների մի մասը արդեն որպես հոդված ընդգրկվել է «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում, որը շուտով կտպագրվի:</p> <p>2019 թ. մայիսի 14-ին ԵՊՀ ԻՍ ՈՒԳԸ նախաձեռնությամբ մասնաճյուղում առաջին անգամ կայացավ «Ամենախելացին» ուսանողական ինտելեկտուալ խաղը, որի կազմակերպչական հարցերում իր օժանդակությունն ուներ ամբիոնի դասախոս Ա. Հասանյանը:</p>		
2.3.4. Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցութ	Համագործակցությունն արտասահմանյան գործընկերների հետ գիտական	Արտասահմանյան գործընկերների հետ գիտական կամ հետազոտական որևէ ծրագրի շուրջ համագործակցության համաձայնություն չի առնվել:	Արտասահմանյան գործընկերների հետ գիտական կամ հետազոտական	Անորոշ է:

յան շարունակականությունը խորացմանը:	կամ հետագոտական որևէ ծրագրի շուրջ:		որևէ ծրագրի շուրջ համագործակցության համաձայնություն չի առնվել փոխադարձ կապերի բացակայության պատճառով:	
4.1.2. Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝ կատարելագործել դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները, ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:	Դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչների և գործընթացների վերանայում, հիմնական դասախոսական կազմի՝ որակավորման բարձրացման կրթական ծրագրերին պարտադիր և լիարժեք մասնակցություն:	Ամբիոնի դասախոսներից 5-ը մասնակցել են անգլերենի որակավորման բարձրացման կրթական ծրագրով նախատեսված դասընթացներին և ստացել անգլերենի իմացության որակավորման համապատասխան աստիճան:	Դասախոսական կազմի համալրման ծրագիր չի մշակվել դրան հրաժեշտության բացակայության պատճառով:	
4.1.4. Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:	Կրթական ծրագրի վերջնարդյունքներին և դրանց համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ձևավորում:	Կրթական ծրագրերի մասնագրերում դրվել են համապատասխան պահանջներ, որոնցով նաև առաջնորդվել է ամբիոնը յուրաքանչյուր դասախոսին տվյալ առարկայով ծանրաբեռնելիս:		
4.1.5. Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:	Դասախոսների ներգրավվածություն կրթական նորագույն ծրագրերում:	Ամբիոնի դասախոսներից 5-ը մասնակցել են անգլերենի որակավորման բարձրացման կրթական ծրագրով նախատեսված դասընթացներին և ստացել անգլերենի իմացության որակավորման համապատասխան աստիճան: Սպասվում է դասախոսների մասնակցությունը կրթական նորագույն ծրագրերին վերաբերող դասընթացներին:		
4.1.6. Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի	Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերի ապահովում:	Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը մնացել են նույնը, և ոչինչ չի փոխվել:	Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը մնացել	Անորոշ է:

նորմերը:			են նույնը, և ոչինչ չի փոխվել, քանի որ գիտխորհրդի կողմից հաստատված նորմեր չեն վերանայվել:	
8.1.1. Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը:	ԵՊՀ-ի գիտակրթական ծրագրերին մասնաճյուղի մասնակցության ընդլայնում և ակտիվացում, մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացում, ինչպես նաև պետական ֆինանսավորման ավելացում:	<p>Ամբիոնի նախաձեռնությամբ ծրագրավորվել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրիատի ուսումնական պլան ներմուծել հետևյալ դասընթացները՝ լրացրություն մասնագիտությունից</p> <ol style="list-style-type: none"> 1. «Հեռուստաքննադատություն», 2. «Մշակութային լրագրություն», 3. «Սոցիալական խնդիրների լրագրություն», 4. «Առցանց մեդիա», 5. «Ռազմական լրագրություն», 6. «Մեդիա, հաղորդակցություն և մշակույթ»: <p>Այդ հարցով ամբիոնը դիմել է ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդին: Որոշվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ գործակցության շրջանակներում գործուղել ֆակուլտետի դասախոսներին՝ դասավանդելու վերոնշյալ դասընթացները, ֆակուլտետում կազմակերպել հեռավար դասընթացներ, որոնց ներգրավված կլինեն Իջևանի մասնաճյուղի ուսանողները:</p> <p>Իսկ մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացման, ինչպես նաև պետական ֆինանսավորման ավելացման հարցերի վերաբերյալ ամբիոնը որևէ արդյունք չունի:</p>	Ամբիոնը մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացման, ինչպես նաև պետական ֆինանսավորման ավելացման հարցերի վերաբերյալ որևէ արդյունք չունի, քանի որ առայժմ առարկայապես չի պատկերացնում իր անելիքները այդ հարցերում:	Անորոշ է:
8.1.2. Ակտիվացնել մասնաճյուղի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:	Ամբիոնի դասախոսական կազմի հետաքրքրություն՝ կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերով, պետական և միջազգային դրամաշնորհներից ակնկալվող դրամական հոսքերից օգտվելու ձգտում:	Արդյունքներ ձեռք չեն բերվել:	Արդյունքներ ձեռք չեն բերվել, քանի որ դրամաշնորհային կազմակերպությունների հետ բանակցություններ չեն ընթացել, և չեն մշակվել կրթական և գիտահետազոտական ծրագրեր, որոնք պետք է ներակայացվեին դրամաշնորհային կազմակերպություններին:	Անորոշ է:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՏ գործողությունը	Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում	Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)	Ի՞նչ չի իրականացվել և ինչու՞	Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում
1.2.2 Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման մեխանիզմը՝ կարևորելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը:	Դասավանդման և մանկավարժական առաջավոր փորձ ունեցող դասախոսների խրախուսում: Պարբերական սեմինարներ՝ դասավանդման փորձի փոխանակման նպատակով: Դասախոսական կազմի ներուժի զարգացում:	Ամբիոններում իրականացվել են փոխադարձ դասալսումներ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը: Ֆակուլտետի ամբիոնների (հայոց լեզվի և գրակ., անգլերեն լեզվի և գրակ., մանկ. և հոգեբ., պատմ.) դասախոսներից 1-ը 2018թ.-ի հոկտեմբերին ԲՈԿ-ի կողմից ստացել է պրոֆեսորի, 5-ը 2019 թ. մայիսին՝ դոցենտի գիտական կոչումներ, 1-ը 2019թ.-ի հունվարին ԵՊՀ ԻՄ-ի դոցենտի կոչում, 5-ը ասիստենտի կոչումներ, 1 դասախոս պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն (մանկ. և հոգեբ. ամբիոն):	Խրախուսման համար հարկավոր է վերանայել որոշ խնդիրներ, մասնավորապես՝ աշխատավարձի որոշակի տարբերակման, բեռնվածության նորմերի հաշվարկի:	Հաջորդ ուստարվա ընթացքում կքննարկվեն տվյալ խնդրի վերաբերյալ ամբիոններից բարձրաձայնված առաջարկները:
1.2.3 Կրթափորձի կարգով ներդնել գնահատման նոր մեթոդներ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա:	Ակնկալվող կրթական վերջնարդյունքներին բից բխող գնահատման համակարգ: Ֆորմատիվ գնահատման մեթոդների ընդլայնված կիրառում կրթական ծրագրերում:	Ամբիոններին հանձնարարվել է դասավանդվող առարկաներից յուրաքանչյուրի համար մշակել դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման նորմեր և չափանիշներ, գնահատման նոր մեթոդները ներառել առարկայական պորտֆոլիոներում՝ գնահատման մեջ: Գնահատման նոր մեթոդները կիրառվել են քննաշրջանի ընթացքում:		
1.2.4 Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:	Ուսումնառության և հետազոտության ինտեգրման ծրագրերի իրականացում և արդյունքների վերլուծություն:	Ամբիոններում ուսումնասիրվել են բակալավրի կրթական ծրագրերն՝ ըստ առանձին մասագիտությունների: Դասավանդվող առարկաներից յուրաքանչյուրի համար ուսումնասիրել են դասապրոցեսում հետազոտական տարրի ներգրավման հնարավորությունները: Դրանք արտահայտված են առարկայական պորտֆոլիոներում՝ ինքնուրույն աշխատանքների և ռեֆերատների թեմատիկայում, ինչպես նաև որոշ առարկաների գնահատման ընթացակարգում ներառված ինքնուրույն հետազոտական աշխատանքներում, որոնց համար քննական ընթացակարգով առանձին միավոր է հատկացվում:		
1.2.5 Իրականացնել ուսումնական փաթեթների կիրառումը բոլոր հիմնական դասընթացներ ի համար պահելով որակի ապահովման մեխանիզմներ	Ուսանողներին տրամադրված ուսումնական փաթեթներ՝ Մասնագիտական գիտելիքների ապահովման և ուսումնառության գործընթացի բարելավման նպատակով:	Բոլոր հիմնական դասընթացների համար առկա են ուսումնական փաթեթները, և դասընթացները տարվում են ըստ կազմված փաթեթների (պորտֆոլիոների):		Դասընթացների փաթեթները վերանայվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ուսումնական պլանով նախատեսված և այլ բնույթի փոփոխությունները ժամանակին կատարելու համար:

ը:				
1.2.6 Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով:	Քննական գործընթացների թափանցիկություն, ուսանողների ինքնագիտակցության բարձրացում, սեփական կարողություններին ապավինելու գիտակցում:	2018-2019 ուստարվա գրավոր ընթացիկ ստուգումները և քննություններն անցկացվել են տեսահսկվող միջոցներով կահավորված քննասենյակներում՝ որոշակի առումով նվազեցնելով գրագողության հնարավորությունը: Բացի այդ, ակադեմիական ազնվությանն են նպաստել անհատական առաջադրանքների կազմումը, Ավարտական և կուրսային աշխատանքներին վերագրվող չափանիշների հստակ վերահսկողությունը, քննասենյակներում հանձնաժողովների առկայությունը: քննական գործընթացի անաչառ վերահսկումը: Ուսանողները քննական գործընթացներից առաջ տեղեկացվել են ակադեմիական ազնվության կարգի մասին: Գրվել և պաշտպանության են ներկայացվել գիտական տեսակետից հետաքրքրություն ներկայացնող թեմաներով կուրսային և ավարտական աշխատանքներ, որոնցից վերջինների մասին իրենց գոհունակությունն են հայտնել 2018-19 ուստարվա ավարտական ատեստավորման հանձնաժողովների նախագահները (առկա են գրավոր հաշվետվություններ):		
1.3.2 Վերանայել և գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը:	Թարմացված և բարելավված կրթական ծրագրեր: Մշտադիտարկում ից և պարբերական վերանայումից բխող վերլուծություններ :	Կրթական ծրագրերը պարբերաբար վերանայվում են, կատարվում են լրացումներ և շտկումներ:		Շարունակական գործընթաց է, վերանայվելու և ամբիոններում քննարկվելու է նաև հաջորդ ուսումնական տարում:
1.3.3 Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:	Դասավանդման գործընթացի խնդիրների վերհանումը և դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատումը:	Ամբիոնային նիստերի ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնվել են նկատված թերությունները, քննարկվել են ուսանողների կողմից դասախոսների վերաբերյալ անցկացված սոցիալաբանության սուլյալները, արվել են հետևություններ:		Գիտխորհրդի կողմից հաստատված կարգ չունենք, ուստի և նախատեսում ենք Մասնաճյուղի գիտխորհրդին ֆակուլտետի գիտխորհրդում քննարկելուց հետո առաջարկներ ներկայացնել դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման համակարգի վերաբերյալ, կատարել վերհանված խնդիրների վերլուծություն և որոշել դրանց շտկման մեխանիզմները:
1.3.5 Նախաձեռնել և իրականացնել ինքնագնահատում:	Գործունեության թույլ կողմերի վերանայումն ու շտկումը:	Այս առումով արդյունք չի գրանցվել:		Հարկավոր է առաջարկների և դրանց քննարկման միջոցով որոշել այն չափանիշները, ըստ

<p>տման ինստիտուցիոնալ գործընթաց:</p>				<p>որոնց պիտի կատարվի ինքնագնահատումը: Այդ չափանիշները ներկայացնել գիտիտրիքի հաստատմանը (հաջորդ ուստարի):</p>
<p>1.4.1 Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:</p>	<p>Ժամանակակից առցանց հնարավորությունների կիրառությունը ուսուցման գործընթացում:</p>	<p>Արդյունք չի արձանագրվել:</p>	<p>Դեռևս մասնաճյուղում ներդրված չէ վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:</p>	<p>Այս խնդիրը Մասնաճյուղում պլանավորվել է իրականացնել մինչև 2019-2020 ուստարվա սկիզբը՝ ամբիոնների յուրաքանչյուր դասախոսից պահանջելով առնվազն մեկ դաընթացի վեր-ուսուցման էլեկտրոնային տարբերակ: Մասնաճյուղում նախատեսվում է մայիս-հուլիս ամիսներին անցկացնել դասընթաց ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման հնարքներին տիրապետելու վերաբերյալ: Ֆակուլտետի որոշ դասախոսներ արդեն ավարտել են դասընթացը, մյուսները համար դասընթացն ընթացքի մեջ է:</p>
<p>1.4.2 Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:</p>	<p>Ուսումնառության էլեկտրոնային մշակված ռեսուրսների առկայություն: Ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման դեկլարացիոն ձևերով: Համակարգից օգտվելու ուղեցույց:</p>	<p>Թեև ֆակուլտետում տեխնոլոգիական հնարավորությունները որոշակի առումով առկա են, սակայն արդյունք չունենք:</p>	<p>Չկա մեթոդական հենք ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:</p>	<p>Կարծում ենք՝ այս հարցը պիտի լուծվի համապատասխան մասնագետների օժանդակությամբ:</p>
<p>1.4.3 Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:</p>	<p>Դասավանդման ժամանակ էլեկտրոնային ռեսուրսների կիրառություն: Դասապրոցեսի արդյունավետ կազմակերպում:</p>	<p>Դասախոսական կազմից ձևավորվել են խմբեր՝ վերապատրաստմանը մասնակցելու համար: Նրանց մի մասը մարտ-ապրիլ ամիսներին անցել է վերապատրաստում՝ Moodle ծրագրով դասընթացներ վարելու համար, մյուս մասը հունիս-հուլիս ամիսներին կավարտի վերապատրաստումը:</p>		
<p>1.4.5 Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:</p>	<p>Ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպում:</p>	<p>Կրթական ծրագրերի համար մշակվել են առարկայական էլեկտրոնային տարբերակներ (դասախոսություններ, առաջադրանքներ, ինքնուրույն հանձնարարականների թեմաներ, հարցաշարեր, օժանդակ նյութեր, գրականության</p>		<p>Գործընթացը շարունակական բնույթ է կրում, և կրթական ծրագրերը համալրվում են նոր էլեկտրոնային ռեսուրսներով:</p>

		ցանկ են), որոնք հասանելի են ուսանողներին:		
1.4.6 Ապահովել հեռակա ուսուցման դասընթացներն համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	Հեռակա ուսուցման դասընթացների արդյունավետ կազմակերպում և դրանց ապահովվածություն էլեկտրոնային ռեսուրսներով:	Հեռակա ուսուցման տարբեր դասընթացների համար ևս մշակվել են էլեկտրոնային դասախոսություններ, որոնք հասանելի են ուսանողներին: Դրանք CD դիսկերով առկա են Մասնաճյուղի գրադարանում:		Գործընթացը շարունակական բնույթ է կրում:
1.4.7 Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:	Արդի պահանջներին համապատասխան առցանց եղանակով իրականացվող ուսուցում:	Դեռևս տեսանելի արդյունքներ չկան:	Այս ուղղությամբ նոր են քայլեր ձեռնարկվում, սակայն չկա մշակված կանոնակարգ:	Այս խնդիրն իրականացնելու համար դասախոսների վերապատրաստումը շարունակական բնույթ է կրում:
2.1.1 Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում և հետազոտական գործունեության խրախուսում:	2018-2019 ուստարվա ընթացքում ֆակուլտետի ամբիոններ իդասախոսների հեղինակությամբ հրատարակվել են 35 գիտական և մեթոդական, 1 լրագրողական հոդվածներ, 8-ը հանձնված են տպագրության, 2 ուսումնական ձեռնարկ (պատմ. և մանկ. և հոգեբ. ամբիոն), 3-ը պատրաստվում են տպագրության (մանկ. և հոգեբ., պատմ. և ֆրանս. լեզվի ամբիոններ), 1 մենագրություն (պատմ. ամբիոն): Մանկավարժ. և հոգեբ. ամբիոնի կողմից հրատարակվել է 6 դասագիրք: Թվարկվածներից 9 տպագրված, 7 տպագրության հանձնված հոդվածներ և 1 դասագիրք հեղինակել են Մասնաճյուղի հիմնական աշխատակիցները:	Գիտահետազոտական գործունեության գնահատման ցուցանիշների սանդղակ չի կազմվել: Դեռևս հստակ պատկերացում չկա գնահատման չափանիշների վերաբերյալ:	Ամբիոններից ստացվելիք առաջարկները հաջորդ ուստարվա ընթացքում կքննարկվեն ֆակուլտետի գիտխորհրդում, այնուհետև ընդունելի տարբերակները կներկայացվեն Մասնաճյուղի գիտական խորհրդին:
2.1.3 Ակտիվացնել և խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում հետազոտական աշխատանքի նկատմամբ: Ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունների ծավալի մեծացում և գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածություն:	Ֆակուլտետի որոշ ամբիոններ ուղղորդել և ղեկավարել են ուսանողներին՝ հետազոտական աշխատանք կատարելիս և օժանդակել նրանց՝ գիտաժողովների մասնակցելու համար: Մասնավորապես՝ ԻՄ-ի ՈւԳԸ-ին ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳԸ-ի հետ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնը և նույն մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ունեն սերտ համագործակցություն: 2018 թ. նոյեմբեր ամսին ԵՊՀ ԻՄ մասնաճյուղ են հրավիրվել		

		<p>«Վարդանանք» հայրենասիրական ակումբի ղեկավարներն ու անդամները: Հանդիպմանը մասնակցել է նաև ԱՍՍԱԼԱ-ի «Վան» գործողության հրամանատար Վազգեն Մխիթյանը: Փոխադարձ այցով ԻՄ-ի ՈւԳԸ-ի անդամներն ու մասնաճյուղի այլ ուսանողներ մասնակցել են ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈւԳԸ-ի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը՝ նվիրված Ղարաբաղյան ազատամարտի հերոսներին: 2019 թ. մարտի 2-ին ԻՄ-ում հայոց լեզվի և գրակամբիոնի և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳԸ-ի նախաձեռնությամբ ԻՄ-ում հրավիրվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված հայ բարբառագիտության արդի խնդիրներին: Մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր, որոշվել է զեկուցման նյութերը վերածել գիտական հոդվածների և տպագրել առանձին ժողովածուով՝ կցելով տարբեր բարբառներով ընթերցված գեղարվեստական նյութերի ձայներիզները: 2019 թ. մայիսի 14-ին մեր ուսանողներից 2-ը զեկուցումներ են կարդացել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳԸ-ի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում կազմակերպված ուսանողական գիտաժողովում՝ նվիրված Հ. Թումանյանի 150-ամյակին: 2019 թ. երկրորդ կիսամյակում ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Աիդա Սարհատյանի նախաձեռնությամբ կազմակերպվել և անցկացվել է համահամալսարանական (ԻՄ) ստեղծագործական շարադրության մրցույթ՝ «Իմ Թումանյանը» խորագրով: Եզրափակիչ փուլ անցած լավագույն 3 շարադրության հեղինակներն արժանացել են Խրախուսական պարգևների: «Օտար լեզուն և գրականություն» մասնագիտության ուսանողները մասնակցել են «Write On! Competition 2018» էսսեների միջազգային մրցույթին, որը կազմակերպել էր ԱՄՆ խաղաղության կորպուսը, և մի քանի ուսանողներ արձանագրել են հաջողություններ (մասնավորապես ՕԼԳ III կուրսի ուսանողուհի Իննա Մկրտումյանն արժանացել է I կարգի</p>		
--	--	---	--	--

		պատվոգրի): «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Շահնազարյանը ճանաչվել է ԵՊՀ լավագույն ուսանող:		
2.1.4 Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրի կրթական ծրագրերում:	Բակալավրի կրթական ծրագրերում բարելավված հետազոտական բաղադրիչի առկայությունը:	Բակալավրի կրթական ծրագրերը վերանայվում են ընթացիկ ուսումնական տարվա ավարտին, և դրանցում հետազոտական բաղադրիչի բարելավումը պայմանավորվում է վերջնադրյունքների վերամշակմամբ և շտկմամբ:		Շարունակական գործընթաց է, ենթակա է մշտադիտարկման:
2.2.2 Նախաձեռնել համագործակցայի և ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին:	Փոխադարձ համագործակցության ստեղծում և ամրապնդում:	Ընթացիկ ուսումնական տարում Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի և Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի դասախոսները մասնակցել և զեկուցումներ են կարդացել Հ. Թումանյանի 150-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովում, որը կազմակերպվել էր ԵՊՀ ԻՄ-ի կողմից 2019 թ.-ի մայիսի 11-ին: Առավել ակտիվ համագործակցություն է ձևավորվել Մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի և ԵՊՀ-ի բանասիրական ու ժուռնալիստիկայի ֆակուլտետների միջև: Վերը նշված հանրապետական գիտաժողովին զեկուցումներով մասնակցել են ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 1 և բանասիրական ֆակուլտետի 4 դասախոսներ: Մասնաճյուղը պաշտոնական հրավեր է ստացել Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանից՝ մասնակցելու «Մաթնոսյանական արձագանքներ» խորագրով 3-րդ հանրապետական գիտաժողովին, որը կայանալու է 2020թ.-ի մայիսի 22-ին:		
2.2.3 Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրեր:	Տարածաշրջանի հետազոտական կրթական ձեռնարկություններում ներգրավված ձեռնարկություններ:	2019 թ.-ի մայիսի 16-ին ֆակուլտետում բացվել է հոգեբանական կենտրոն, ինչի կապակցությամբ տեղի է ունեցել «Էմոցիոնալ ինտելեկտ (EQ)» թեմայով սեմինար-թրեյնինգ, որը վարել է ԵՊՀ ԻՄ-ի մանկ. և հոգեբ. Ամբիոնի դասախոս Աշխեն Մկոյանը: Սեմինարին մասնակցել են ԵՊՀ ԻՄ-ի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներ և ուսանողներ:		Շարունակական գործընթաց է:
2.3.1 Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում մասնաճյուղի աշխատողների հրապարակումներ:	Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում կատարված հրապարակումներ, մասնաճյուղի վարկանիշի	Արձանագրված արդյունքներ չկան:	Խրախուսման համար ֆինանսական միջոցներ և հատկացումներ են	Հարկավոր է հստակեցնել և Մասնաճյուղ գիտխորհրդով հաստատել խրախուսման կարգը:

կումները:	բարձրացում:		անհրաժեշտ:	
<p>2.3.3 Կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը:</p>	<p>Համագործակցային փոխհարաբերությունների ձևավորում, արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատակիցների թվի աճ:</p>	<p>2018թ. հոկտեմբերի 7-11-ին պատմ. և հասարակ. Ամբիոնի դասախոս Վ. Պողոսյանը մասնակցել է ՌԴ Դրիմի ինքնավար հանրապետության կողմից ,ԱՊՀ և Արևելյան երկրների երիտասարդների աշխատաժողովին: Անգլ. լեզվի և գրակ. ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավվել է ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի կողմից կազմակերպվելիք միջազգային գիտաժողովի կազմկոմիտեում: Գիտաժողովը նվիրված է ԵՊՀ հարյուրամյակին:</p>	<p>Մասնաճյուղում չի կազմակերպվել միջազգային գիտաժողով՝ ֆինանսական , կազմակերպչական և բովանդակային թերակատարության պատճառով:</p>	<p>Առայժմ այս ուղղությամբ որևէ բան չի ծրագրվում:</p>
<p>2.3.4 Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը:</p>	<p>Համատեղ ուսումնամեթոդական և գիտահետազոտական փոխգործակցության ամրապնդում և խորացում:</p>	<p>Ընթացիկ ուսումնական տարում շարունակվեց ուսանողների փոխանակության ծրագրի շրջանակներում մասնաճյուղի 5 ուսանողների այցը Ֆրանսիայի հանրապետության Վալանս քաղաքի Մաեստրիա համալսարան, որտեղ մեր ուսանողները հաջողությամբ մասնակցեցին բոլոր դասընթացներին: Այցը կարևոր դեր խաղաց համալսարանական կյանքում և արժանացավ Մաեստրիաի ղեկավարության և հայկական համայնքի բարձր գնահատականին: Այժմ կատարվում են նախապատրաստական աշխատանքներ՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2019 թ. Հոկտեմբերին ֆրանսիացի ուսանողների և դասախոսների հյուրընկալելու համար: Շարունակվել է նաև համագործակցությունը «Ֆրանս-հայկական ասոցացիայի» հետ: 2019 թ.-ի մայիսի 22-ին համալսարան այցելեցին «Ֆրանս-հայկական ասոցացիայի» 3 անդամներ, որոնք կրթաթոշակներ հանձնեցին 4-րդ և 2-րդ կուրսի ուսանողուհիներ ԷմմաՇահնագարյանին և Վարսիկ Իսախանյանին: Շարունակական է դարձել նաև համագործակցությունը Ամերիկայի Խաղաղության կորպուսի հետ, որի կամավորը՝ Ռայան Ջեքոբսոնը, ուսումնական տարվա ընթացքում Մասնաճյուղում խոսակցական</p>		

		անգլերեն է դասավանդել ոչ միայն մասնագիտական բաժնի, այլև այլ բաժինների ուսանողների: Ընդ որում նշենք, որ դասաժամերը եղել են դասացուցակով կանոնակարգված, իսկ մասնագիտական բաժնի ուսանողները այդ դասընթացից ստացել են քննական միավոր:		
3.2.2 Մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ԵՊՀ-ում գործող ծրագրերը օգտագործելու և մասնաճյուղի համար միջոնակ ծրագրեր պատրաստելու ուղղությամբ:	Մրցունակ ծրագրերի առկայություն՝ ըստ արդի կարիքների:	Հայոց լեզվի և գրակ. ամբիոնի նախաձեռնությամբ ծրագրվել է Հայոց լեզու և գրականությունն մասնագիտության բակալավրիատի ուսումնական պլան ներմուծել հետևյալ դասընթացները՝ լրագրություն մասնագիտությունից՝ <ol style="list-style-type: none"> 1. ,Հեռուստաքննադատությունն, 2. ,Մշակութային լրագրությունն, 3. ,Սոցիալական խնդիրների լրագրություն», 4. ,Առցանց մեդիան, 5. ,Ռազմական լրագրությունն, 6. ,Մեդիա, հաղորդակցություն և մշակույթ: Այդ հարցով ամբիոնը դիմել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդին: Որոշվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ գործակցության շրջանակներում գործուղել ֆակուլտետի դասախոսներին՝ դասավանդելու վերոնշյալ դասընթացները, ֆակուլտետում կազմակերպել հեռավար դասընթացներ, որոնցն երգրավված կլինեն Իջևանի մասնաճյուղի ուսանողները: 		
3.2.3 Մշակել տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:	Պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերի ընդլայնում: Տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթական նոր ծրագրեր:	Ամբիոններում պրակտիկաների (մանկավարժական, ուսումնական, մանկավարժի որակավորման, արտադրական) ղեկավարների կողմից մշակվել են ծրագրեր, որոնք իրականացնելու համար ՄԿՊԿ բաժնի կողմից կնքվել են համագործակցային պայմանագրեր դպրոցների և տարբեր կազմակերպությունների հետ՝ լրացուցիչ ծառայություններ տրամադրելու վերաբերյալ:		

<p>4.1.1 Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:</p>	<p>Որակավորման բարձրացման առավել կատարելագործված ծրագրի և դրանով վերապատրաստված դասախոսների առկայություն:</p>	<p>Ընթացիկ ուսումնական տարվա մեջ դասախոսների վերապատրաստման աշխատանքները համակարգող Նարա Ղազարյանի անմիջական վերահսկողությամբ իրականացվել են դասախոսական կազմի որակավորման բարձրացման մի շարք դասընթացներ: Ֆակուլտետի ամբիոնների մի շարք աշխատակիցներ մասնակցել են «ԵՊՀ» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի՝ «Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ» մոդուլում ներառված «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում» դասընթացին և այն հաջողությամբ ավարտել են՝ ստանալով համապատասխան կրեդիտը: Նշենք, որ այս դասընթացը շարունակական է, և դասախոսների երկրորդ խումբը այն դեռևս չի ավարտել: Ֆակուլտետի մի շարք աշխատակիցներ էլ հաջողությամբ ավարտել են «Անգլերեն ակադեմիական միջավայրում» դասընթացը՝ ստանալով համապատասխան կրեդիտ: 2018թ. հոկտեմբերի 7-11-ին պատմ. և հասարակ. ամբիոնի դասախոս Վ. Պողոսյանը մասնակցել է ՌԴ Դրիմ իինքնավար հանրապետության կողմից «ԱՊՀ և Արևելյան երկրների երիտասարդների» աշխատաժողովին: 2018թ. դեկտեմբերի 21-ին կազմակերպվել է «Փոխներգործուն մեթոդները որպես մասնագիտական համոզմունքների միջոց» թեմայով Ջ. Գյուլամիրյանի կողմից իրականացված դասընթացը, 2019թ. հունվարի 17-ին՝ Բ.Գ.Թ. դոցենտ Ա. Սարհատյանի վարած «Տեսականի և գործնականի համադրումը ուսումնական գործընթացում» դաս-քննարկումը: 2019թ. փետրվարի 12-13-ին ֆակուլտետի դասախոսները մասնակցել են Ս. Խաչատրյանի կողմից իրականացված «Ինչպես է սովորում մարդը» և «Կրթության ժամանակակից խնդիրները» թեմաներով դաս-քննարկմանը, 2019թ. մայիսի 8-ին՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդներ» թեմայով Ա. Մարդանյանի կազմակերպած դաս-քննարկմանը: 2019թ. մայիսի 10-11-ին ֆակուլտետի</p>		
---	---	---	--	--

		<p>դասախոսները մասնակցել են «Կրթական հետազոտությունները կրթական համակարգում» թեմայով Մ. Գալստյանի վարած դաս-քննարկմանը:</p> <p>2019թ. մայիսի 10-24-ը պատմ. և հասարակ. ամբիոնի դասախոս Վ. Պողոսյանը անցկացրել է «Հակամարտությունների փոխակերպում» թեմայով դասընթաց, որին մասնակցել են նույն ամբիոնի դասախոսներ և «Պատմություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման մի շարք ուսանողներ:</p> <p>2019թ. հունիսի 18-19-ին ֆակուլտետի դասախոսները մասնակցել են «Առարկայական ծրագրերի մշակման ABC մոտեցում» երկօրյա դասընթացին:</p> <p>2019թ. հունիսի 14-ին Մասնաճյուղի մի շարք աշխատակիցներ մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով կազմակերպված աշխատաժողովին:</p>		
<p>4.1.2 Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝ -կատարելագործել դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները, ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:</p>	<p>Ունենալ դասախոսական որակյալ հիմնական կազմ: Դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչներով իրականացված գործընթաց, վերապատրաստված դասախոսների խումբ:</p>	<p>Համաձայն ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգի (հաստատված ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017 թ.-ի հոկտեմբերի 28-ի N 27 նիստում)՝ ընթացիկ 2018-2019 ուստարում ֆակուլտետի դասախոսներից 6-ը ստացել են ԵՊՀ ԻՄ-ի դոցենտի, 5-ը՝ ասիստենտի պաշտոն: Հիմնական դասախոսական կազմը մասնակցում է Մասնաճյուղում կազմակերպված որակավորման դասընթացներին՝ ըստ նախապես կազմված ժամանակացույցների: Ընթացիկ տարում վերապատրաստման 12 տարբեր դասընթացներից յուրաքանչյուրին մասնակցել է ֆակուլտետի 15 դասախոս միջին հաշվարկով:</p>	<p>Դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները չեն վերանայվել:</p>	
<p>4.1.3 Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:</p>	<p>Երիտասարդ դասախոսների մանկավարժական և կայացմանը օժանդակումը:</p>	<p>Ընթացիկ տարում կազմակերպվել են մի քանի այդպիսի դասընթացներ դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնի կողմից՝ հետևյալ թեմաներով. «Փոխներգործուն մեթոդները՝ որպես</p>		

		մասնագիտական համոզմունքների ձևավորման միջոց», «Տեսականի ու գործնականի համադրումը ուսումնական գործընթացում», «Ուսուցման ժամանակակից մեթոդներ»:		
4.1.4 Մահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:	Մասնագիտական որակների համապատասխանություն ծրագրի կրթական վերջնարդյունքներին: Կրթական ծրագրերի մասնագրերում համապատասխան պահանջներ:	Կրթական ծրագրերը և դրանց վերջնարդյունքները ենթակա են մշտադիտարկման, և ըստ այդմ դասախոսների մասնագիտական որակներին վերաբերող պահանջները քննարկվում են ամբիոնի նիստերի ժամանակ:		
4.1.5 Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:	Կրթական նորագույն ծրագրերում դասախոսների ընդգրկվածություն: Ուսանողների բավարարվածության աճ դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին:	Առայժմ դասախոսները անհատական նախաձեռնությամբ են մասնակցում կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերի (ինչպես, օրինակ, սթ. հունիսի 24-28-ին ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Մանե Աղբալյանը մասնակցել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին):	Խթանող մեխանիզմներ դեռևս չկան:	
4.1.6 Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:	Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը: Գիտլսորհրդի կողմից հաստատված նորմեր:	Այս հարցում ԵՊՀ ԻՄ-ը հետևում է ԵՊՀ –ի նորմերին:		
5.1.1 Կրթական ծրագրերի պահանջներից ելնելով՝ տեխնոլոգիայես վերազինել առկա լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները, ձևավորել նորերը:	Տեխնոլոգիայես վերազինված ուսումնական տարածքների առկայություն:	Ֆակուլտետն ունի 6 լսարաններ, անգլերեն լեզվի ուսուցման ռեսուրս կենտրոն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուների կաբինետներ, որոնք տեխնոլոգիայես վերազինված են:		
6.1.1 Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից:	Ուսանողների կրթական և այլ կարիքների բացահայտում: Սոցիոլոգիական ուսումնասիրության զեկույց և առաջարկությունների	Ուսանողների կրթական կարիքների վերհանումը և կրթական գործընթացներից նրանց բավարարվածության մասին տեղեկատվությունը յուրաքանչյուր կիսամյակում ստացվում է սոցիալաբանների		

	փաթեթ:	միջոցով, որոնք անանուն են և իրականացվում են ուսումնամեթոդական վարչության և կրթության որակի ապահովման բաժնի կողմից: Հարցումների արդյունքները քննարկվում են դրանք իրականացնող բաժիններում, այնուհետև ամփոփներում և տրվում են համապատասխան եզրակացություններ՝ ամփոփի նիստերի արձանագրություններով:		
6.1.2 Ձարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները:	Ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական բարելավված ծառայություններ:	Ֆակուլտետի ամփոփներից յուրաքանչյուրում ուսումնական տարվա I և II կիսամյակների համար կազմվել են խորհրդատվության գրաֆիկներ՝ ըստ առանձին առարկաների և դասախոսների, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարման համար, որոնց վերաբերյալ ուսանողներն իրազեկվել են: Ինչ վերաբերում է լրացուցիչ կրթական ծառայություններին, 2018-2019 ուստարվա սկզբին փորձ արվեց անգլերեն լեզվի բարձր կուրսերի ուսանողների ուժերով կամավորության հիմունքով կազմակերպել անգլերենի ուսուցման դասընթացներ, սակայն ցուցակագրված ուսանողների պասիվ մասնակցության պատճառով որոշ ժամանակ անց պարապմունքները դադարեցին:		
6.1.4 Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները:	Ուսանողական ակումբային համակարգի զարգացում, ուսանողական առօրյայի աշխուժացում: Ուսանողական ակումբների արդյունավետ գործունեություն, բազմազան մարզամշակութային ծրագրեր:	2018 թ.-ի սեպտեմբերի 24-ին կազմակերպվել է վոլեյբոլի աղջիկների բաց առաջնություն՝ նվիրված ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին, որին մասնակցել են ՕԼԳ I, ՕԼԳ II և ՏՄՄ II կուրսի 11 ուսանողուհիներ, 2019 թ.-ի մայիսի 23-ին ՈՒԳԸ-ի աջակցությամբ գրադարանում կազմակերպված շախմատի կանանց և աղջիկների մրցաշարում 3-րդ հորիզոնական է զբաղեցրել մեր ֆակուլտետի ուսանողուհին (ՏՄՄ II կուրս, Զինա Ոսկանյան): Ընթացիկ տարում ֆակուլտետում տարբեր ամփոփների կողմից կազմակերպվել են ինտելեկտուալ, հայրենաճանաչողական, գրական-զեղարվեստական բնույթի միջոցառումներ: Այսպես, 2019թ. մարտի 22-ին Ֆրանկոֆոնիայի տոների շրջանակում		

		<p>Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Միրա Կարապետյանի և Անահիտ Հովհաննիսյանի կողմից կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ «Ամենախելացի ֆրանկոֆոնը» խորագրով:</p> <p>2018թ. հոկտեմբերի 10-ին կայացավ միջոցառում՝ նվիրված Փարիզի տեսարժան վայրերին, որը կազմակերպել էր Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Սվետա Օհանյանը:</p> <p>2019թ. մարտի 26-ին Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շրջանակներում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ մեծ շանտոնյե Շառլ Ազնավուրին նվիրված գրական-երաժշտական հուշ-ցերեկույթ, որը նույնպես կազմակերպել էր Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Սվետա Օհանյանը:</p> <p>«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ակտիվորեն մասնակցել են անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումներին, այդ թվում՝ «Շեքսպիրի 455- ամյակը », «Ամանորյա միջոցառում», «Կանանց տոն», «Տավուշի տեսարժան վայրերը», բաց դաս Կանաչ Միմֆոնիա այգում, բաց դաս-ընթերցումներ արտասահմանյան գրականությունից՝ խրախուսմամբ և նվերներով և այլն: Բացի վերջինից, բոլոր միջոցառումների աշխատանքային լեզուն անգլերենն էր:</p> <p>Պատմության և հասարակագիտության ամբիոնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են բաց դասեր և կլոր սեղաններ: Այսպես.</p> <p>1. 2018թ. դեկտեմբերի 3-ին Վլ. Պոդոյանը և Գ. Բալասանյանը գրադարանում կազմակերպել են կլոր սեղան քննարկում՝ «ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության առաջնահերթությունները» թեմայով, որին մասնակցում էին ինչպես ամբիոնի աշխատակիցները՝ Ն. Գրիգորյան, Ա. Ազատյանը, Ա. Մկրտումյանը, Ն. Ճաղարյանը, այնպես էլ «Պատմություն» մասնագիտության ուսանողները:</p> <p>2. 2018թ. դեկտեմբերի 5-ին պատմաբանի օրվա առթիվ ամբիոնի դասախոսներ Ն. Գրիգորյանը, Ա. Ազատյանը և Վլ. Պոդոյանը «Պատմություն»</p>	
--	--	---	--

		<p>մասնագիտության ուսանողների հետ կազմակերպեցին բաց դաս-քննարկում:</p> <p>3. 2019թ. մայիսի 16-ին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետում կայացավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված դաս-քննարկում, որը կազմակերպել էին Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոսներ պ.գ.թ., դոցենտ Նաթելլա Գրիգորյանը և ասիստենտ Արա Ազատյանը՝ «Պատմություն» մասնագիտության ուսանողների հետ համատեղ:</p> <p>4. 2019թ. մայիսի 25-ին «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի աշխատակիցների և «Պատմություն» մասնագիտության ուսանողների համար «Քաղաքակրթական տեսությունները արդի պատմության խորապատկերների ներքո» դասախոսությամբ հանդես է եկել ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանը:</p> <p>Հայոց լեզվի և գրականության ամբիոնը հանդես է եկել հետևյալ նախաձեռնություններով.</p> <p>2018 թ. սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի և դպրության օրը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տոնական միջոցառմամբ մեկնարկեց նոր ուսումնական տարին: Միջոցառման կազմակերպչական հարցերում ՈւԽ-ին օժանդակել էր ամբիոնի դասախոս Ա. Հասանյանը: 2018 թ. նոյեմբերի 30-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանում տեղի ունեցավ հանդիպում հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսների, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների և ժամանակակից գրող, ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտ Նաիրա Փիրումյանի ու գրականագետ, գրաքննադատ Անի Փաշայանի հետ: Հանդիպման նպատակն էր քննարկել Նաիրա Փիրումյանի «Տերևը» ժողովածուի պատմվածքները: 2019 թ. ապրիլի 3-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ «Նրանք ապրում են» խորագրով գրական-երաժշտական հուշ-ցերեկույթը՝ նվիրված Ապրիլյան պատերազմում զոհված հայորդիների սուրբ հիշատակին: Միջոցառումը կազմակերպվել էր հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ,</p>		
--	--	---	--	--

		<p>բ. գ. թ. Ալիսա Հասանյանի հետ համագործակցությամբ: 2019 թ. ապրիլի 15-ին ԵՊՀ իջևանի մասնաճյուղի գրադարանում տեղի ունեցավ ամերիկաբնակ գրող Վարդգես Դավթյանի՝ վերջին տարիներին հրատարակած գրքերի շնորհանդեսը, որը կազմակերպվել էր Տավուշի մարզային և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանների համատեղ նախա-ձեռնությամբ: Վարդգես Դավթյանի «Հեքիաթներ Ամերիկայի մասին» աշխատությունը գրականագիտական վերլուծության ենթարկեց ԵՊՀ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Աիդա Սարհատյանը: «Մտորումներ թամբի վրա» աշխատության անդրա-դարձավ ԵՊՀ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Ալիսա Հասանյանը: 2019 թ. ապրիլին ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Աիդա Սարհատյանի նախաձեռնությամբ կազմակերպվել և իրականացվել է գրական-գեղարվեստական միջոցառում՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյակին: Միջոցառմանը ներկա են եղել հյուրեր, մարզի հոգևոր թեմի հոգևորականներ: Ամբիոնը 2019 թ. մայիսի 11-ին ԻՄ-ում հրավիրել է հանրապետական գիտաժողով՝ նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին, որին մասնակցել են հանրապետության տարբեր գիտակրթական հաստատությունների գիտնականներ, գիտաշխատողներ, ուսուցիչներ՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրակ. պատմ. ամբիոնից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնից, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից, Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնից, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնից, Իջևանի հիմնական դպրոցներից, ինչպես նաև ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության և անգլերեն լեզվի և գրականության ամբիոններից: Ընթերցվել է 24 գիտական զեկուցում: Ջեկուցումների մի մասը</p>	
--	--	---	--

		արդեն որպես հողված ընդգրկվել է «Ակունք» գիտական հողվածների ժողովածուում, որը շուտով կտպագրվի: 2019 թ. մայիսի 14-ին ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ նախաձեռնությամբ մասնաճյուղում առաջին անգամ կայացավ «Ամենախելացին» ուսանողական ինտելեկտուալ խաղը, որի կազմակերպչական հարցերում իր օժանդակությունն ուներ ամբիոնի դասախոս Ա. Հասանյանը:		
6.2.4 Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈԻԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:	Ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում: Ուսանողների ակտիվ մասնակցություն ՈԻԳԸ ծրագրերին:	ՈԻԳԸ նախաձեռնություններում ուսանողների մասնակցությանը մշտապես օժանդակել են ֆակուլտետի ամբիոնների աշխատակիցները:		
7.1.2 Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար մասնաճյուղի կայքէջը:	Ունենալ թարմ տեղեկատվություն ֆակուլտետի վերաբերյալ, մշտապես թարմացվող տեղեկատվական համակարգ բակալավրիատի դիմորդների համար:	Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում ընթացիկ տարում բավական ակտիվ գործունեություն ծավալվեց ֆակուլտետում ՄԿՊԿ բաժնի հետ համագործակցությամբ, որին մասնակցեցին ֆակուլտետի տարբեր ամբիոններ: Այսպես, 1.2019թ. ապրիլի 20-ին մասնագիտական կողմնորոշման նպատակով պատմության բաց դաս իրականացվեց Իջևանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտների համար, որը վարեց Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Դավիթ Թինոյանը: 2. Նոյեմբերյանի տարածաշրջանի մի շարք դպրոցներում, ի թիվս մասնաճյուղի մի շարք այլ աշխատակիցների, մասնագիտական կողմնորոշման գրույցներ վարեց նաև ամբիոնի ասիստենտ Ա. Ազատյանը: 3. Մարտի 12-22 ընկած ժամանակահատվածում Իջևանի ավագ դպրոցում, վարժարանում, Աչաջրի, Ազատամուտի, Սևքարի, Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ գրույցներ են անցկացրել հայոց լեզվի և գրականության		

		<p>ամբիոնի դոցենտներ Ա. Մարիատյանը, Ա. Հասանյանը, Կ. Ղողոսյանը, Լ. Թումանյանը, Վ. Աղաբաբյանը: Ուսումնական տարվա ընթացքում դպրոցներում պարբերաբար հանդիպումներ է ունեցել նաև ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Վ. Ավագյանը:</p> <p>4. Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը և ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, ասիստենտ Ա. Մարդանյանը ևս Իջևանի ավագ դպրոցում մասնագիտական կողնորոշման վերաբերյալ զրույցներ են անցկացրել 11-րդ և 12-րդ դասարանցիների հետ:</p> <p>Տարված աշխատանքները մանրամասնորեն լուսաբանվել են ԵՊՀ կայքէջում:</p>		
<p>7.1.3 ԵՊՀ-ի հետ համատեղ Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներ անցկացնել մասնաճյուղում՝ 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը:</p>	<p>Ստեղծել աշակերտ-բուհ համագործակցային միջավայր, պարզել մարզի դիմորդների ունակությունները, դիմորդների շրջանում Մասնաճյուղի հանդեպ մեծացնել հատաքրքրությունը:</p>	<p>2019 թ.-ի մարտի 16-ին կայացավ ԵՊՀ-ի կողմից Իջևանի I հիմնական դպրոցում հանրակրթական տարբեր առարկաների գծով կազմակերպված օլիմպիադայի I փուլը Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար, որի անցկացմանը մասնակցեցին ֆակուլտետից 8 դասախոսներ և 13 ուսանողներ:</p>		<p>Ամենամյա գործընթաց է, որին մշտապես մասնակցում են ֆակուլտետի տարբեր ամբիոնների դասախոսներ:</p>
<p>7.1.4 Ավագ դպրոցների և քոլեջների համար կազմակերպել «բաց դռների օր» և ճանաչողական այց մասնաճյուղ:</p>	<p>Մասնաճյուղի և նրա կողմից իրականացվող կրթության վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում դիմորդների շրջանում:</p>	<p>2018-2019 ուստարվա II կիսամյակում ՄԿՊԿ բաժինը, ֆակուլտետի հետ համագործակցելով, կազմակերպել է «բաց դռների օր» և ճանաչողական այցեր մասնաճյուղ, որի ընթացքում ավագ դպրոցի և վարժարանի սաները ծանոթացել են ֆակուլտետի կառուցվածքին, հնարավորություններին, մասնագիտություններին, իրենց ցանկությամբ ունկնդիր են եղել տարբեր դասախոսությունների:</p>		

<p>7.1.5 Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները տարածաշրջանում՝ հիմնելով դիմորդների հետ տարվող աշխատանքների ներկայացուցչություններ և դրանք ապահովելով անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:</p>	<p>Դիմորդների կողմնորոշում դեպի ԵՊՀ ԻՄ: Ընդունելության ցուցանիշների աճ:</p>	<p>Նախորդ տարիների համեմատ 2018-2019 ուստարվա ընթացքում այս առումով բավական մեծ աշխատանք է կատարվել՝ շնորհիվ ՄԿՊԿ բաժնի կազմակերպած գործունեության և այս խնդրի իրականացման գործում ֆակուլտետի հետ համագործակցության:</p> <p>Մասնաճյուղի և գործող մասնագիտությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը տարածվել է ինչպես ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, այնպես էլ տպագրված բուկլետների միջոցով:</p>	<p>Շարունակական գործընթաց է:</p>
<p>7.1.6 Ընդլայնել ԵՊՀ ԻՄ –ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների և քոլեջների շրջանակը:</p>	<p>Կայուն համագործակցության ձևավորում: Բուհ-դպրոց շարունակական փոխհարաբերության ստեղծում:</p>	<p>2017-2018 ուստարում Մասնաճյուղը պայմանագրեր ուներ թիվ 1 հիմնական դպրոցի, Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի ավագ դպրոցների հետ (անժամկետ), ինչպես նաև Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ –ի հետ (անժամկետ): 2018-2019 ուստարվա ընթացքում կնքվել են պայմանագրեր թիվ 1 և թիվ 5 հիմնական դպրոցների հետ՝ մանկավարժական պրակտիկաները կազմակերպելու համար:</p>	
<p>7.1.7 ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում:</p>	<p>Հետաքրքրության ձևավորում բուհի նկատմամբ: Մասնագիտական կողմնորոշման հարցում աշակերտին օժանդակություն:</p>	<p>Ինչպես արդեն վերը նշել ենք, ֆակուլտետի տարբեր ամբիոնների դասախոսներ մասնագիտական կողմնորոշման համար այցելել են մարզի դպրոցներ և զրույցներ ունեցել 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների հետ:</p> <p>Հաջորդ ուսումնական տարվա համար ամբիոններում արդեն նախապատրաստվում են թեմաներ՝ կարդացվելիք դասախոսությունների և քննարկումների համար:</p>	
<p>7.2.1 Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի:</p>	<p>Ընդունելության ամենամյա պլանավորում՝ ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի:</p>	<p>Ուսուցման օպտիմալ պլանավորումից ելնելով՝ հաջորդ՝ 2019-2020 ուստարվա ընդունելության համար վերաբացվեց «Հոգեբանություն» կրթական ծրագիրը և ներդրվեց նոր՝ «Մանկավարժություն» կրթամասի «Ռուսաց լեզու»</p>	

գրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը:		և գրականություն» կրթական ծրագիրը:		
8.4.3 Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:	Ունենենալ գնահատման թափանցիկ գործընթաց, գնահատման համակարգի և չափանիշների վերաբերյալ իրազեկված ուսանողներ:	2018-2019 ուսումնական տարում գրավոր ընթացիկ ստուգումներն ու քննությունները անցկացվեցին տեսահսկվող լսարաններում, որպեսզի հնարավորինս ապահովվի ակադեմիական ազնվությունը: Բացի այդ, ուսումնական փաթեթներում հետազոտական տարրի համար նախատեսվում է միավոր, գործնական աշխատանքների կամ սեմինարների համար նույնպես նախատեսվում է միավոր, որը նպաստում է բազմաբաղադրիչ գնահատմանը և գնահատման գործընթացի թափանցիկությանը:		
9.2.3 Օգտագործել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ԵՊՀ-ի կապերը՝ համատեղ ծրագրեր իրականացնելու համար:	Համագործակցային կապերի ձևավորում, համատեղ կատարվող ծրագրերի առկայություն	Ինչպես արդեն ասել ենք, ֆակուլտետը համագործակցում է Ֆրանսիայի Վալանս քաղաքի «Մաեստրիս» համալսարանի հետ, և ինչպես նախորդ տարի, այնպես էլ այս ուսումնական տարվա զարնանը մեր ուսանողներն այնտեղ վերապատրաստում էին անցնում՝ երեք շաբաթ տևողությամբ: Եկող ուսումնական տարվա հոկտեմբերին նախատեսված է ֆրանսիացիների փոխադարձ այցը մեր ուսումնական հաստատություն:		